

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ
ՍՈՒՆԱ ՄԻԶԱՅԵԼՅԱՆ
ՄԵՐԱ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ՆԱԻՐԱ ԽԱՉԻԲԱԲՅԱՆ

ՆԱՅԵՐԵՆԸ ՈՐՊԵՏԱ ԱԺՅՈՒՌՔԻ ԼԵՇՈՒ ԵՎ ՕՏԱՐ ԼԵՇՈՒ

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԻՆԱԿԸ

* ՄԻԿԱ-ԱՐՄԵՆԻԱ, ԺԱՄԱՆԱԿԱԿՈՑ ԱՐԿԵՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA

INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER

MERI SARGSYAN

SONA MIKAYELIAN

SEDA BAGHRAMYAN

NAIRA KHACHIBABYAN

ARMENIAN AS A LANGUAGE
OF THE DIASPORA AND A FOREIGN
LANGUAGE

(THE EXAMPLE OF THE ARMENIAN
COMMUNITY OF ST. PETERSBURG)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԵՐԻ ՍՈՐԳՍՅԱՆ
ՍՈՆԱ ՄԻՋԱՅԵԼՅԱՆ
ՄԵՂԱ ԲԱՂԴԱՍՅԱՆ
ՆԱԽԻՐԱ ԽԱՇԻԲԱԲՅԱՆ

ՆԱՅԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ԱԺՅՈՒՌՔԻ ԼԵՂՈՒ ԵՎ ՕՏԱՐ ԼԵՂՈՒ

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԻՆԱԿԸ

Ներածություն	7
ԳԼՈՒԽ 1	
ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՊԱՏԱՎԱԼՆ ՎԿԱՂԻԿ ԵՎ ԼԵՃՎԱՎԻՃԱԿԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ.....	12
1.1. ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏԱՎԱԼՆ, ՏՆՏԵՍԱՎԱԼՆ, ՀՈԳԵՎՈՐ, ԳԻՏԱՄՇՎԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԸ	13
1.2. ՀԱՆՐԱՆԵՃՎԱՔԱՆԱԿԱԼ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ	26
ԳԼՈՒԽ 2	
ՀԱՅԵՐԵՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՄԱՐՏԱՀՐՎՎԵՐՆԵՐԸ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐՔՈՒՐԳՈՒՄ	42
ԳԼՈՒԽ 3	
ՀԱՅԵՐԵՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՎՈՎՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐՔՈՒՐԳՈՒՄ	62
3.1. ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԴՊՐՈՑԱՎԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	65
3.2. ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀԱՎԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	72
ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	78
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	87
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	88
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	94
APPENDICES.....	101
ԽՈՍՔ ԵՐԱՆՏԻՔԻ	106

INTRODUCTION	7
CHAPTER 1	
THE ARMENIAN COMMUNITY OF SAINT PETERSBURG: HISTORICAL OVERVIEW AND LANGUAGE SITUATION ANALYSIS.....	12
1.1. A COMPREHENSIVE PICTURE OF THE HISTORICAL, ECONOMIC, SPIRITUAL, AND SCIENTIFIC-CULTURAL CONDITIONS OF THE ARMENIAN COMMUNITY IN SAINT PETERSBURG	13
1.2. SOCIOLINGUISTIC ANALYSIS OF THE ARMENIAN COMMUNITY IN SAINT PETERSBURG.....	26
CHAPTER 2	
CHALLENGES OF TEACHING ARMENIAN IN SAINT PETERSBURG	42
CHAPTER 3	
FEATURES OF TEACHING ARMENIAN IN SAINT PETERSBURG.....	62
3.1. TEACHING ARMENIAN IN THE SCHOOL SYSTEM.....	65
3.2. TEACHING ARMENIAN IN THE HIGHER EDUCATION SYSTEM	72
CONCLUSIONS.....	78
NOTES.....	87
SUMMARY.....	78
LIST OF REFERENCES.....	88
APPENDICES (ARMENIAN)	94
APPENDICES (ENGLISH)	100
ACKNOWLEDGMENTS	106

ԱՆՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզուն հասարակական կարեւոր իրողություն է, հետեւաբար լեզվավիճակն էլ կախված է տվյալ հանրության հասարակական, քաղաքական, տնտեսական եւ մշակութային տայմանների ամբողջությունից: «Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ արդի Սփյուռքը կարող է նշանակալի դեր ունենալ ինչդէս բնակության երկրի, այնդէս էլ նախկին հայրենիքի քաղաքական եւ տնտեսական կյանքում» (Karapetyan, 2018): Պետք է նշել, որ վերջիններս գտնվում են անընդհատ զարգացման մեջ, ինչն անշուշտ անդրադառնում է նաեւ լեզվավիճակի վրա, որը եւս փոփոխվում է՝ հանդէս բերելով զարգացման որոշակի ուղղություններ, միտումներ եւ օրինաչափություններ: Յուրաքանչյուր լեզվի զարգացումն ամենից առաջ տայմանավորվում է այն փոփոխություններով, որոնք կատարվում են դրա գործառնական ոլորտում եւ կառուցվածքում: Այս երկու կողմերն էլ կարեւոր են ու փոխկառուցված, իսկ դրանց փոխհարաբերությունները բազմաշերտ են ու տարատեսակ:

Սփյուռքն ընդհանրապէս շատ բարդ իրողություն է. այն ներկայացնում է մեկ ազգ, բայց ոչ մեկ մշակույթ, մեկ ազգ, բայց ոչ մեկ լեզու, մեկ էթնիկ, սփռված ինքնություն՝ զուգակցված խմբային բազում այլ ինքնությունների: Մեր լեզվի յուրահատկություններն ու դրա ուսումնասիրության հետ կապված խնդիրները թելադրում են ընդհանուրից տարբեր եւ յուրահատուկ մոտեցումներ անգամ հայրենիքում: Երկու գրական լեզվաճյուղերի դարավոր առկայությունը եւ բարբառների ու բանավոր խոսակցական լեզվի այսօրինակ բազմազանությունն արդեն ծնում են լուրջ բարդություններ, որոնք, անկասկած, բազմադասակարգ են սփյուռքում:

Օտարալեզու միջավայրում հայ համայնքը բազմատարր է: Այն հանրույթներում, որտեղ կիրառվում են երկու, երեք եւ ավելի լեզուներ, հայերենը դէպք է ուսումնասիրել ոչ թէ առանձին, այլ մյուս լեզուների փոխհարաբերության համատեքստում: Բացի այդ՝ դէպք է հաշվի առնել, որ այժմ Ռուսաստանի հայկական սփյուռքում հավասարապէս կիրառելի են եւ՝ գրական հայերենը, եւ՝ բարբառները: Պետք է նշել, որ ռուսալեզու միջավայրում հայության տարբեր զանգվածների հաղորդակցման ընդհանուր լեզուն ռուսերենն է: Եթէ հայկական համայնքի ձեւավորման ակունքներում նկատելի էր ռուսերենին տիրապետելու գերխնդիրը, ապա այժմ գերխնդիր է դարձել հայերենը շնորհաւալը (որոշ դէպքերում՝ նույնիսկ հասկանալը): Գրական հայերենով շփվում են բացառապէս ուսուցիչները, գրողներն ու դէպքում ատյաններում աշխատող հայերը: Հայերենը, ռուսալեզու միջավայրում լինելով հաղորդակցման ընդհանուր լեզու հայության տարբեր զանգվածների համար, այնուամենայնիվ զրկված է միասնական գործառնական ու զարգացման, կանոնարկման հնարավորությունից: Այն ենթակա է ռուսերենի տարաբնույթ ազդեցություններին եւ ստիպված է դիմակայել բազում մարտահրավերների:

ՌԴ վարչական տարածքների մեծ մասում գործում են հայկական ազգային-մշակութային ինքնավարություններ, համայնքային հասարակական, երիտասարդական, ուսանողական կազմակերպություններ եւ միություններ: Գործում են բազմաթիվ կիրակնօրյա դպրոցներ: Տղազրկում են թերթեր, համայնքների մեծ մասն

ումի էլեկտրոնային կայքէջեր: Չնայած այս ամենին՝ համայնքային կազմակերպությունների շուրջ համախմբվում է հայության փոքր մասը՝ այդպիսով կամաց-կամաց նահանջելով ազգային արմատներից: Ինչ վերաբերում է հայերենի իմացությանը, առաջ տեսք է նշել, որ երիտասարդ սերունդը հիմնականում չի տիրապետում մայրենի լեզվին կամ տիրապետում է միայն խոսակցական մակարդակում, ինչն էլ, գործածության ոլորտ չունենալով, աստիճանաբար մոռացվում է: Ցավալիորեն տեսք է արձանագրել, որ հայոց լեզվի նկատմամբ հետաքրքրությունն օրեցօր նվազում է, եւ դա ունի իր օբյեկտիվ ու սուբյեկտիվ դատմաները, որոնք դայմանավորված են եւ՝ լեզվական, եւ՝ արտալեզվական գործոններով:

Ամփոփելի է, որ հայադաժողովրդային եւ հայերենադաժողովրդային խնդիրները տարիներ շարունակ մասնագետների եւ դատական մարմինների ուշադրության կենտրոնում են: Իրականացվում են բազմաթիվ եւ տարատեսակ միջոցառումներ, կազմակերպվում են քննարկումներ, մշակվում համագործակցության ծրագրեր: Սակայն փաստ է, որ մինչեւ այժմ չկար որեւէ ուսումնասիրություն, գիտական հետազոտություն՝ նվիրված ՌԴ սփյուռքում գործառնող հայերենի արդի լեզվավիճակին: Արդի հայերենի ուսումնասիրությանը նվիրված առատ գրականության մեջ քիչ են այն աշխատությունները, հոդվածները, որոնք նվիրված են հայերենի այն որակին, որով հաղորդակցվում են ռուսաստանաբնակ մեր հայրենակիցները: Մինչդեռ հայադաժողովրդային, ազգային արժեքների, մայրենի լեզվի դաժողովրդային եւ զարգացման տեսակետից այժմ շատ կարեւոր է ուսումնասիրել ՌԴ սփյուռքում գործառնող հայերենի արդի լեզվավիճակը, բացաժայտել դաժ առաժնժնահատկությունները, դարժել գրական կանոնարկված լեզվի հետ ունեցած աղերսներն ու տարբերությունները, ռուսերենի ազդեցության մակարդակը, լեզվական փոխներթափանցումները, դրական եւ բացասական փոխազդեցությունները եւ այլն:

«Հայերենը որդես սփյուռքի լեզու եւ օտար լեզու (Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի օրինակը)» հետազոտության **նդատակն** է ներկայացնել հայերենի արդի լեզվավիճակը ամենախոշոր հայկական համայնքում՝ Ռուսաստանում (Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի օրինակով), քննել ռուսալեզու միջավայրում հայերենի զարգացման միտումները, խնդիրները, ուսուցման առաժնժնահատկությունները:

Հետազոտությունն իրականացնելու համար առաջադրել եւ փորժել ենք լուծել հետեյալ **խնդիրները**.

1. ուսումնասիրել ռուսալեզու միջավայրի հասարակական, քաղաքական, տնտեսական եւ մշակութային դայմանների ազդեցությունը լեզվավիճակի վրա,
2. վեր հանել Ռուսաստանի հայ գաղթօջախի բնութագրական գծերը (Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի օրինակով),
3. ուսումնասիրել հայկական ազգային-մշակութային ինքնավարությունները ՌԴ-ում (Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի օրինակով),

4. ուսումնասիրել օտարալեզու միջավայրում մայրենի լեզուների գործառնամանա՝ առնչվող խնդիրները, կիրառված սկզբունքները՝ ըստ անհրաժեշտության օգտագործելու նպատակով,
5. կատարել լեզվական հանրության հանրալեզվաբանական քննություն, որոշել լեզվին տիրապետելու մակարդակը, խոսքի որակը եւ հասարակական տարբերակման աստիճանը եւ այլն,
6. կատարել լեզվական հանրության տարբեր սերունդների խոսքի քննություն,
7. դիտարկել արտալեզվական գործոնները եւ դրանցով դայնամավորված լեզվական շեղումները,
8. ուսումնասիրել հայերենը որդես սփյուռքի եւ օտար լեզու դասավանդելու խնդիրները:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք որակական եւ քանակական մեթոդաբանության գործիքակազմը՝ *խորքային հարցազրույցներ*, *փորձագիտական հարցումներ*, *փաստաթղթերի վերլուծություն*, *դիտարկում* եւ *հարցաթերթի* լրացում:

Դաշտային աշխատանքների ընթացքում կայացել են մի շարք հանդիպումներ հայկական համայնքի գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների, դպրոցների, համալսարանական աշխատակիցների հետ:

Այցելել ենք **Պետերբուրգի լեռնական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի՝ Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի ամբիոն**: Հանդիպում է տեղի ունեցել ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ **Դոնարա Մկրտչյանի** հետ, քննարկվել են մեր հետազոտության առանձնահատկությունները, կատարվել են արխիվային նյութերի ճշգրտումներ, քննարկվել են հայերենի ուսուցման, հայկական մշակույթի ղախողանման, գործառնվող լեզվի առանձնահատկություններին վերաբերող հարցեր: Դասախոսն է իրականացվել բակալավրիատի 2-րդ կուրսի հայոց լեզվի դասին: Դոնարա Մկրտչյանի ջանքերով ֆակուլտետի ուսանողները սովորում են ոչ միայն ժամանակակից հայոց լեզու, այլեւ ուսումնասիրում են գրաբար, հայ ժողովրդի ղատմություն, հայ գրականություն, Կովկասի ղատմություն, ձեռագրագիտություն, մշակութաբանություն:

Դոնարա Մկրտչյանի հրավերով աշխատանքային այց է եղել նաեւ **ՌԴ ՊԱ արեւելյան ձեռագրերի ինստիտուտ**: Շրջայց է կազմակերպվել ինստիտուտի սրահներում, հնարավորություն է ստեղծվել ծանոթանալու հայկական ֆոնդին: Հիշատակելի է եւ ողջունելի, որ Դոնարա Մկրտչյանը խանդավառությամբ շարունակել է Կարեն Յուզբաշյանի մեծ գործը՝ հայկական ձեռագրերի ֆոնդի համակարգումը: Այժմ արդեն հասանելի են ոչ միայն հնատիղ եւ ժամանակակից, այլեւ Ա. Առաի եւ Հ. Օրբելու ֆոնդերը:

Աշխատանքային այցով հյուրընկալվել ենք **Սանկտ Պետերբուրգի «Տնտեսագի-**

տության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի հունանիտար գիտությունների և արվեստի դպրոցի օտար լեզուների դեղատրամեմտում, որտեղ անկաշկանդ ու մտերմիկ միջավայրում հանդիպում է եղել գիտական մախազծի արտասահմանյան գործընկեր, լեզվաբան **Եվգենի Մուլոդիչենկոյի** հետ: Եվգենի Մուլոդիչենկոն իր խորհուրդներով մեծադեպ աջակցել է գիտական հետազոտության հաջող կայացմանը: Մասնավորապես անգնահատելի է վերջինիս ներդրումը մեթոդական ցուցումների, հարցաթերթերի մշակման, արխիվային նյութեր տրամադրելու առումով: Բացի այդ՝ **Եվգենի Մուլոդիչենկոն** աշխատանքային այցով հյուրընկալվել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում՝ գիտական մախազծի շրջանակում հանրալեզվաբանական հետազոտության արդյունքներն ամբողջացնելու և դասախոսություններ կարդալու նպատակով: Երկշաբաթյա այցի ընթացքում վերջինս նաեւ անձնակազմի վերադաստիարակում է իրականացրել **«Մետադրագմատիկա»** թեմայով:

Դաշտային աշխատանքների ընթացքում այցելել ենք նաեւ Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցիներ՝ **Սուրբ Կատարինե** և **Սուրբ Հարություն: Սուրբ Կատարինե եկեղեցում** Սանկտ Պետերբուրգի հայության հոգեւոր հովիվ Վրժանադատիվ Տեր Եփրեմ քահանա Չարգարյանի հետ խորքային հարցազրույց է իրականացվել, զրուցել ենք եկեղեցում կից գործող **«Վերմատում»** մշակութային կենտրոնի, **«Լոր սերունդ»** երիտասարդական միության, ղեկավարության հայկական համայնքի, հայադաստիարակության և այլ խնդիրների մասին:

Դաշտային աշխատանքների համար կարեւոր է եղել նաեւ **Հայ Առաքելական եկեղեցու Լազարյանների անվան հայեցի դաստիարակության կենտրոն** (Լազարյանների անվան կիրակնօրյա դպրոց) այցելությունը: Կենտրոնը կիրակնօրյա դպրոց է, որտեղ գործում են մախադաստիարակական դասընթացներ մախադրոցահասակ երեխաների համար, 1-6-րդ դասարանների դպրոցական ծրագրեր և մեծահասակների դասընթացներ՝ առանց տարիքային սահմանափակման: Վշխատանքային խումբը ներկա է եղել դասերին, դասալսում իրականացրել, ծանոթացել ուսումնական և առարկայական ծրագրերին: Հնարավորություն է ընձեռվել շփվելու թե՛ դպրոցի տնօրենի և ուսուցիչների, թե՛ աշակերտների և ծնողների հետ, կատարվել է հանրալեզվաբանական քննություն:

Վշխատանքային հանդիպումներից էր նաեւ Սանկտ Պետերբուրգի **Միքայել Լորիս-Մելիքովի անվան թիվ 259 միջնակարգ դպրոց** այցելությունը: Հատկանշական է, որ ռուսական հանրակրթական հաստատությունը 2017 թվականից կրում է Միքայել Լորիս-Մելիքովի անունը: Այն բազմալեզու դպրոց է, որտեղ սովորում են տասներկու ազգությունների ժողովուրդ աշակերտներ: Որոշես էթնիկ ուղղվածության դպրոց՝ հայերենի ուսուցումը սկզբնական շրջանում իրականացվել է ֆակուլտատիվ սկզբունքով, իսկ այժմ այն ներառված է 1-6 դասարանների հայազգի աշակերտների դաստիարակության ուսումնական ծրագրում: Մի շարք հանդիպումներ են եղել ոչ միայն դպրոցի տնօրենի, այլև ուսուցիչների հետ, անցկացվել են դասախոսումներ, կատարվել է հանրալեզվաբանական քննություն:

Սույն հետազոտությամբ առաջին անգամ մանրամասնորեն քննվում է հայերենի արդի լեզվավիճակը ռուսալեզու միջավայրում: Կոլկտիվ մենագրության երեք զլուխներում վերլուծվում են ներկայացվում են հայերենը որդես մայրենի, օտար կամ երկրորդ լեզու դասավանդելու խնդիրները, միջոցները եւ եղանակները, վեր են հանվում առկա մարտահրավերները: Կիրառական լեզվաբանության եւ հանրալեզվաբանության **միջգիտակարգային սույն հետազոտության միջոցով** հնարավոր է դարձել ներկայացնել լիարժեք տատկեր ռուսալեզու միջավայրում հայերենի արդի վիճակի, խնդիրների, զարգացման միտումների վերաբերյալ:

Կոլեկտիվ մենագրությունը հասցեագրված է Հայաստանում եւ սփյուռքում աղորող մեր հայրենակիցներին, որոնք կարելուում են հայերենի դերն ու նշանակությունը ռուսախոս միջավայրում՝ ի շահ հայադաճողանության եւ հայերենադաճողանության, հետաքրքրված են հայկական սփյուռքի լեզվավիճակով եւ հայերենագիտությամբ: Այն կարող է օգտակար լինել նաեւ օտարերկրացիներին, որոնք հետաքրքրված են հայերենի ուսումնասիրությամբ եւ դասավանդումով:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՎԱՅՆԱՅԻՆ
ԴԱՏԱՎԱՆ ԱՎԱՐԿ ԵՎ ԼԵԶՎԱԿԻՆՈՒԹՅՈՒՆ
ՔԱՆՈՒԹՅՈՒՆ

Նայաստանը, զբաղեցնելով աշխարհաքաղաքական կարեւոր դիրք, իր ողջ լուսնային ընթացքում եղել է հզոր ղեկավարությունների բախման կիզակետ, ինչի հետեւանքով Հայաստանից մշտապես արտագաղթի մեծ հոսք է եղել: Իսկ որդես արդյունք աշխարհի տարբեր երկրներում ձեւավորվել են հայկական համայնքներ (Virabyan, 2011):

Ռուսաստանում հայկական սփյուռքի ձեւավորման առավել ակտիվ շրջանը կապված է խորհրդային տարիների հետ: Ռուսաստանի մի շարք շրջաններում հայերն իրենց թվաքանակով երկրորդ տեղն են զբաղեցնում ռուսներից հետո: Ինչդեռ փաստում են սոցիոլոգիական հետազոտությունները, հարմարվելու եւ սոցիալական աճի համար ամենաբարենդաստը ՌԴ-ն է, քանի որ իր սոցիոմշակութային դաշտով մոտ է մեր երկրին (Karapetyan, 2013): Այժմ իրենց կազմակերպվածությամբ, հայադաժողովրդային եւ Հայաստան-Սփյուռք ամրադնոման ուղղությամբ նշանակալի դերակատարությամբ աչքի են ընկնում ՌԴ մի շարք քաղաքների հայկական հասարակական կազմակերպություններ ու ազգային-մշակութային ինքնավարություններ:

1.1. ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏԱՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ, ԳԻՏԱԲԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԸ

Համայնքի ձեւավորումը, քաղաքական-տնտեսական լայնանները

Սանկտ Պետերբուրգում հայերի մասին առաջին տվյալները թվագրվում են Ռուսաստանի Հյուսիսային մայրաքաղաքի հիմնադրման գրեթե սկզբից:

1703 թ.՝ Շվեդիայի հետ տեսական լատերազմի ավարտից հետո, Պետրոս Առաջինը Նեւայի ափին մոր մայրաքաղաքի կառուցման աշխատանքների սկիզբը դրեց: Ոչ միայն կառուցվում էին տներ, ամրոցներ, ջրանցքներ, մավամատույցներ եւ տնտեսական բնույթի այլ շինություններ, այլեւ ստեղծվում էին դիվանագիտական, տնտեսական, առետրաարդյունաբերական հարաբերություններ: Նոր մայրաքաղաքը կառուղ օղակ լիտի լիներ արեւմտյան աշխարհի հետ. ավանդաբար ստեղծվել է այն կարծիքը, թե «Պետրոս Առեծը, հիմնելով Սանկտ Պետերբուրգը, բացել է լատուոհան դեղի եվրոդա, մաեւ մոլատակ է ունեցել շվեդներից հետ խլել Ռուսաստանից զավթած տարածքները» (Galoyan, 2003):

Պետրոս Առաջինը զիտեր, որ դեմես իր հայրը՝ Ալեքսեյ Միխայելովիչը, արժետում էր հայ առետրականների գործունեությունը, որոնք Նոր Տուղայում հիմնադրել էին առետրային կազմակերպություններ, հաջողություններ ունեին մետաքսի արտահանման գործում եւ իրենց մեմաշնորհային դիրքի շնորհիվ առանցքային նշանակություն ունեին իրամառուսաեվրոդական առետրական հարաբերություններում: Լիներով մեծահարուստ եւ տաղամոլալոր գործարարներ՝ նրանք Իրանի եւ Շվեդիայի հետ սերտ առետրատնտեսական հարաբերություններ էին հաստատել, ինչը նրանցից առաջ Իրանին անել չէր հաջողվել: Հայ առետրա-

կանները, ռուսների հետ ամետրային ազատ հարաբերություններին զուգահեռ, ստացել էին նաեւ Ռուսաստանի տարածքով՝ Արխանգելսկի միջոցով, Յյուսիսային Եվրոպայի հետ ամետրային կադեր հաստատելու իրավունք (Meruzhanyan, 2023): Դեռեւս 1695 թ. Պետրոս I-ը Պարսից շահին ուղղված իր նամակում դա-հանջում էր, որ հայ ամետրականների ձեռքում կենտրոնացած մետաքսի ողջ ամետուրն ուղղվեր հարավի գխավոր դարդասներով՝ Աստրախանից Մոսկվա, եւ որ «այդ հայերին ցարական մեծության տէրության մեջ ամետրի համար նա-խատեսված աղյուսներով սահմանամերձ քաղաքներում թույլ տան անցնել ա-ռանց հաղադման, առանց որեւէ խոչընդոտի» (Angaladyan, 2010): Այդպիսով տալով մի շարք արտոնություններ՝ Պետրոս Առաջինը խրախուսում էր հայերի հոսքը աղագա մայրաքաղաք:

Քաղաքի հիմնադրման սկզբից եւթ այնտեղ արդեն դարբերաբար հայտնվում են հայ հասարակայնության ներկայացուցիչներ, նրանց թվում՝ վաճառական-ներ եւ ձեռնարկատերեր: 1702 թ. աշնանը քաղաք է ժամանում հայազգի դատ-վիրակ Նազար Օրեխովչը (Օրուխեմցը) (Miqayelyan, 2003): 1707 թ. Ջուղայի հայկական ամետրական ընկերության ճանաչված գործիչ Սաֆար Վասիլեւը, որը Վասիլեւներ – Մակարովներ - խաստատովներ տոհմի հիմնադիրն էր, դի-մում է Պետրոս Առաջինին՝ խնդրելով հատկացնել արտասահմանի հետ կադ-վելու շահավետ ուղի, քանի որ Արխանգելսկով անցնող ուղին երկար եւ թանկ է: Կայսրը հայ վաճառականին թույլատրում է Մոսկվայից անցնել Նարվա, աղա Սանկտ Պետերբուրգ եւ ծովով մեկնել արտասահման (Barkhudaryan, 2010):

Ըստ գրավոր աղբյուրների՝ Սանկտ Պետերբուրգում հայ խոշոր առաջին վաճա-ռականը **Լուկա Շիրվանով** էր (Դուկաս Շիրվանյան, Շիրվանց) (Meruzhanyan, 2023): Նա Աստրախանում եւ Դվարում մետաքս եւ բամբակե գործվածքեղենի մշակման ֆաբրիկաներ ուներ: 1708 թ. հաստատվելով Սանկտ Պետերբուրգում՝ բացում է ամետրի տուն, որը զբաղվում էր մետաքսի, բամբակյա կտորեղենի մշակմամբ: Նա էլ հետագայում դառնում է տեղի հայ համայնքի առաջնորդը:

1710 թ. Յյուսիսային մայրաքաղաքում հայերի թիվը հասնում է 50-ի. նրանք հիմ-նականում խոշոր ամետրականներ էին, որոնք զբաղվում էին մետաքսի, թան-կարժեք քարերի, զինու, սուրճի, շաքարի, բանջարեղենի ամետրով, ինչդեհ նաեւ հմուտ արհեստավորներ էին, որոնք ներգրավված էին մայրաքաղաքի կա-ռուցման աշխատանքներում: Այս շրջանում առկա «հայկական գործակալություն-ներն» էլ կազմավորել են հայկական գաղութը (Grigoryan, 1979): Այս նույն ժա-մանակ էլ արտաքին կադերի ատյանում թարգմանիչ էր աշխատում հայ Աֆա-նասի Պանկրատովը (Barkhudaryan, 2010):

Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի առաջին սերնդի մեջ, ինչդեհ մշվեց, առանձնահատուկ դերակատարում ուներ **Լուկա Շիրվանով**, ինչդեհ նաեւ նրա եղբայր Իվան Կարադետը (Հովհաննես Շիրվանյան) (Meruzhanyan, 2023): Լ. Շիր-վանովը, որ վայելում էր դաշտոնական Պետերբուրգի վստահությունը, կադող-օղակ էր Ռուսաստանի եւ հայկական վերնախավի միջեւ: Ամետրային ակտիվ գոր-ծունեությունից բացի՝ նորջողայեցի այս հայի անունը հիշատակվում է արտաքին

գործերի կոլեգիայի՝ 1727 թ. փաստաթղթերում, որտեղ նշվում է, որ մա մի խումբ գործիչների հետ դիվանագիտական առաքելությամբ մեկնել է Արեւելյան (ղարսկական) Հայաստան (Meruzhanyan, 2023): Հարկ է նշել, որ Պետրոս Առաջինի կառավարման շրջանից էլ, ըստ էության, սկսվում է Արեւելյան Հայաստանի՝ Ռուսաստանին հետագա միացման համար տարվող քաղաքականությունը:

1730-ական թթ., գրող Ս. Գլինկայի խոստովանությամբ, «Նեւայի ափերին սահմանազատվում էին հայկական հողամասերը» (Miqayelyan, 2003): Այս շրջանում Լ. Շիրվանովին Պատկանող հողատարածքի վրա ձեւավորվում է *Հայկական* անունը կրող փողոց: 1740 թ. Լ. Շիրվանովը կարողացել էր այստեղ հայկական եկեղեցի կառուցելու թույլտվություն ստանալ, սակայն հետագայում եկեղեցու կառուցման աշխատանքները կայսրուհի Ելիզավետա Պետրովնայի հրամանով դադարեցվել են, չնայած որ այն հիմնականում արդեն կառուցված էր (Meruzhanyan, 2023): Թեւեւ հայ համայնքի այն ժամանակվա բազում նշանավոր ներկայացուցիչներ ադրում էին առավելադեպ Վասիլեյան կղզում, ենթադրվում է, որ *Հայկական (Արմյանական)* փողոցը գտնվել է Պետրոպոլիսյան ամրոցին հարող թաղամասերում, քանի որ հենց Պետրոպոլիսյան ամրոցի (քաղաքի կառուցադատման ձեւավորման համակենտրոններից մեկի) շուրջ էին այն տարիներին բնակություն հաստատում արիեստավորներն ու մանր առետրականները (Miqayelyan, 2003): Հայկական նրբանցքի ցուցանակը մինչ օրս պահպանվում է Վասիլեյան կղզում (Nazaryan, 2017):

Պետերբուրգի 1720-1730-ական թթ. հայ գաղթաշախի բնակչության թիվը թեւեւ մեզ հայտնի չէ, բայց այն փաստը, որ 1730 թ. քաղաքն ունեցել է իր ծխատեր քահանան (Հովհաննես Շերիստանով), վկայում է արդեն ձեւավորված հայ համայնքի գոյության մասին (Sarukhanyan, 2003):

Ինչդեռ նշվեց վերելում, դեռեւս Պետրոս Առաջինի կառավարման շրջանից Ռուսաստանն Արեւելյան Հայաստանն իր կազմում ներառելու քաղաքականություն էր վարում: Պետերբուրգի ամենահայտնի՝ *Լազարյանների* սերնդի ներկայացուցիչները ցանկանում էին Ռուսաստանի հովանու ներքո վերականգնել հայկական թագավորությունը եւ այդ ուղղությամբ ջանքեր էին գործադրում, տարբեր ծրագրեր մշակում՝ ներկայացնելով ռուսական վերնախավին: Հայ ազատագրական շարժման գործիչներն այն համոզմունքն ունեին, որ միայն Ռուսաստանն է այն իրական ուժը, որի օգնությամբ քաղաքականադեպ բզկտված հայ ժողովուրդը կարող էր թողափել օտարատիրության լուծը: Թեւեւ ֆեոդալական-նորտատիրական հարաբերություններ էին հաստատված մաեւ Ռուսաստանում, բայց այստեղ, ի տարբերություն Արեւելքի մահմեդական աշխարհի, ֆեոդալիզմի ընդերքում զարգանում էին արտադրողական նոր ուժեր, որոնք նախադասման էին նոր արտադրահարաբերությունների առաջացման ու զարգացման համար (Sarukhanyan, 2003): Արդեն այդ դաիին Ռուսաստանն իր բարեկրթական մակարդակով անհամեմատ բարձր էր մահմեդական աշխարհից: Բացի այդ՝ Հյուսիսային դատերազմում Շվեդիային դարտության մատնելուց հետո Ռուսաստանն իր ռազմական հզորությամբ ձեռք էր բերել միջազգային լայն ճանաչում: Թվում էր, որ Ռուսաստանը կարող է իրագործել մաեւ դեղի հարավ առաջխաղացման իր ծրագիրը:

Պետրոս Աբեի մահից հետո, սակայն, ներքին եւ միջազգային անբարենդաստ զործոնների ղյատնառով Ռուսաստանը չկարողացավ իրականացնել դեղի Ան-դրկովկաս առաջխաղացման իր մշակած ղյաւները: Այս ղյարագայում անկա-տար էին մնում նաեւ հայ ազատագրական ակնկալիքները: Քաղաքական տեսակետից տասնութերորդ դարը Հայաստանի համար անցավ Ռուսաստա-նին սղասելով, որը շատ էր մոտեցել. այն ըստ էության հայտնվել էր Կովկասում (Sarukhanyan, 2003):

Ավելի ուշ՝ 1827 թ. աշնանը, ռուս-ղարսկական ղյատերագմի ընթացքում, երբ ակնհայտ էին դարձել Պարսկաստանի ղյարտությունը եւ Արեւելյան Հայաստա-նը Ռուսաստանին միացնելու հարցը, Պետերբուրգի մի խումբ մտավորականներ Ռուսաստանի կազմում Հայաստանի իրավաքաղաքական կարգավիճակը սահ-մանող նախագիծ եմ մշակում: Հեղինակը **Խ. Լազարյան** էր: Նախագծի կազմ-մանն ակտիվորեն մասնակցում եմ իշխան **Կոստանդին Արղության-երկայնա-բագուկը** եւ մշանավոր բանասեր **Ալեքսանդր Խոտաբաշյանը** (Barkhudaryan & Aleksanyan, 2015): Նախագծի հեղինակները շանացել էին Ռուսաստանի կազ-մում աղահովել Հայաստանի ղյայն ինքնավարությունը: Նրանք, փաստորեն, առաջարկում էին վերականգնել հայկական թագավորությունը եւ Նիկոլայ I-ի թվարկվող տիտղոսների թվում ավելացնել նաեւ «հայոց թագավոր» տիտղոսը: Ռուսաստանի տիրաղետության տակ անցնող Հայաստանում բնակչության բա-նակն ավելացնելու նղատակով նախագծի 5-րդ հոդվածով անհրաժեշտ էր հա-մարվում Պարսկաստանից հայ բնակչության ներգաղթ կազմակերղելը: Խ. Լազարյանը մասնակցում է նաեւ Հայաստանի սահմանների հարցի բարձրաց-մանը, շանում է Պարսկաստանի հետ Հայաստանի սահմանագիծ դարձնել ոչ թե Արաքս գետը, այլ Արարատյան լեռնաշղթան, որղեսգի Մակուի գավառը եւս միացվի Հայաստանին, որն իր լեռներով ու կիրճերով կղառնար բնական ղյատ-վար (Barkhudaryan & Aleksanyan, 2015): Նախագծի հեղինակները կարեւոր մշա-նակություն էին տալիս երկրի ներքին բարեկարգության, բնակչության իրավա-կան ղյաշտղանվածության հարցերին, դեմ էին ճորտատիրությանը՝ որղես հա-սարակական կյանքում բացասական երեւոյթներ առաջացնող համակարգի:

Նիկոլայ I-ի օրոք՝ 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենշայի ղյայմանագրով Արեւելյան Հայաստանն անցնում է Ռուսական կայսրության տիրաղետության տակ, սակայն հայ մտավորականների առաջարկած նախագիծը հաջողություն չի ունենում: 1840 թ. Արեւելյան Հայաստանն արղեն ընդգրկված էր Անդրկով-կասյան երկրամասի կազմում: Հոյսերը վերափոխվում եմ հուսահատության, սա-կայն սա ղյարսկական տիրաղետության տակ գտնվելուց գերաղասելի էր անվտանգային առումով. իննսում տարվա ընթացքում՝ մինչեւ կայսրության ան-կումը, Արեւելյան Հայաստանի տարածքում մոր ճեղքերումներ չեմ լինում (Me-ruzhanian, 2023):

Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո հայ հասարակական մտքի մի շարք ներկայացուցիչներ ոչ միայն արձագանքում եմ ռուսական քաղա-քական կյանքում կատարվող իրաղարձություններին, այլեւ աշքի ընկնող դեր եմ խաղում ժամանակի համառուսաստանյան հեղափոխական շարժումներում: 19-

րդ դ. 40-ական թթ. այդօրինակ հայերից էր ուտոդիստ- սոցիալիստ, գրող, բժիշկ **Դմիտրի Դմիտրևիչ Ախշարումովը**, որը 1846 թ. ավարտելով Պետերբուրգի համալսարանի արեւելագիտության ֆակուլտետը՝ անդամագրվում է Պետրաշեւականների խմբակին՝ դառնալով Ռուսաստանի ուտոդիստ-սոցիալիստական շարժման նշանավոր դեմքերից մեկը: Դ. Դ. Ախշարումովը 1812 թ. հայրենական ռաւտերազմի ակտիւ մասնակից եւ այդ ռաւտերազմի առաջին ռաւտմագիրներից մեկի՝ գեներալ-մայոր **Դ. Ի. Ախշարումովի** որդին էր՝ ազնւական, ունետր ընտանիքից: Բայց դա, ինշոէս ժամանակին դէկաբրիստներին, հետ շոահեց նրան հեղափոխական դառնալուց: Այսոիսով, Ախշարումովը Խ. Աբովանից հետո հայ այն գործիշներից էր, որ հայ հասարակական-քաղաքական միտքը կամրշում էր 19-րդ դ. 40-ական թվականներին ռուսական իրականության մեշ գործող ամենահեղափոխական կազմակերոյություններից մեկի՝ ռետրաշեւականների հեղափոխական-դեմոկրատական թեւի գաղափարների հետ (Sarukhanyan, 2003):

Հայերը գործուն մասնակցոյութուն են ունենում նաեւ Պետերբուրգում սկիզբ առան *Նարոդնիկական* շարժմանը: Այդ շարժման ջախշախումից հետո հայ նարոդնիկների մի մասը հարում է նոր ձեւավորվող ազգային բուրժուական կուսակցոյութուններին, ոմանք էլ՝ ռուսական սոցիալ-դեմոկրատիային: 1880-ական թթ. Ռուսաստանում կազմակերոյվում են մարքսիստական խմբակներ: 1895 թ. Պետերբուրգում հիմնադրվան «Բանվոր դասակարգի ազատագրոյութան ռայքարի միոյութուն» կազմակերոյութունում իրենց հեղափոխական մկրտութունն են ստանում Բոգդան Կոնոյանցը, Արշակ Չուրաբյանը, Հովհ. Մելիք-Հովսեփյանը եւ ուրիշներ (Sarukhanyan, 2003):

Սանկտ Պետերբուրգում աորող հայերի հոգետր-եկեղեցական կյանքը

Պետերբուրգում հաստատվան հայերը, շնայան փոքր թվաքանակին, այնուամենայնիվ անմիջաոէս ձեռնամուխ են լինում եկեղեցիներ հիմնելու, հայ առաքելական հավատքը, դավանանքը ռահոդանելու գործին եւ մեծ ջանքեր են գործադրում այդ ուղղութանը: Մեծաքանակ ու խայտաբղետ բնակշոյութուն ունեցող հզոր մայրաքաղաքում ազգային ինքնութոյւնը, նկարագիրը ռահոդանելու, ամենակուլ հոծ գանգվանին շնուվելու, շանհետանալու հիմնական լեակը եկեղեցին էր (Barkhudaryan, 2010): Սրանով էր ռայնանավորվան հայերի՝ հայկական եկեղեցիներ հիմնադրելու հետետղականութոյւնը, որը սկզբնական շրջանում բավականին բարդ էր:

1714 թ. վարդաոէտ Մինասն առաջինն էր, որ հայկական եկեղեցի կառուցելու խնդրանքով դիմում է քաղաքի իշխանութոյւններին, սակայն մերժվում է: Միայն 1725 թ. է հայերի միոյութունը ստանում Սինոդի թույլտվութոյւնը՝ աղոթատուն բացելու Վասիլիի կղզում գտնվող մի փայտե շինութոյւնում (“Hayery Sankt Peterburgum,” 2024): Այն, սակայն, կարն ժամանակ անց, այրվում է:

1740 թ. հայկական նոր կազմավորվան համայնքի առաջնորդ **Լ. Ծիւվանովը** կա-

րողանում է *Հայկական* անունով փողոցում իրեն լատինացի հողատարածքում Սանկտ Ստեփանոս կաթոլիկոսի եկեղեցի կառուցելու թույլտվություն ստանալ, եւ կառուցման աշխատանքները սկսվում են: Սակայն դա ժուռ հողատարականության սրտով չէր, քանի որ Հայաստանյայց Սուրբ եկեղեցու վարդապետությունը որոշակի տարբերություններ ուներ եւ մասամբ շեղվում էր հունամուսական ուղղափառ եկեղեցու դավանանքից: Նրանք հայ առաքելական եկեղեցին համարում էին աղանդ եւ երկյուղ կրելով դրա տարածվելուց՝ փորձում էին խոչընդոտել (Barkhudaryan, 2010): Այդ նշանակով ժուռական մի շարք երկրակալներ հատուկ գրությամբ դիմում են Սինոդին, որոշեցի արգելի հայկական եկեղեցու կառուցումը: Սինոդն իր հերթին կայսրուհուն խնդրում է հրաման արձակել Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Վատրախանի հայկական եկեղեցիները փակելու վերաբերյալ՝ բացի Վատրախանի քարաշեն եկեղեցուց: 1742 թ. հրապարակվում է հաջորդ՝ Ելիզավետա Պետրովնա կայսրուհու հրամանը՝ հայկական բոլոր եկեղեցիները, բացի Վատրախանի եկեղեցուց, համարել անօրինական (Meruzhanyan, 2023): Պետերբուրգի եկեղեցու կառուցման աշխատանքները եւս դադարեցվում են: Մնում է միայն Լ. Շիրվանովի տան բակի փոքր եկեղեցին, որը մասնաճյուղ էր ճարտարապետ Պ. Տրեգլինի նախագծով կիսով չափ կառուցել. այն ծառայելու էր որդես աղոթատեղի:

Օտարերկրացիների նկատմամբ տարվող քաղաքականությունը բարեփոխվում է, երբ գահ է բարձրանում Եկատերինա II-ը (1762-1796 թթ.): Նա համարում էր, որ Ռուսաստանն ընդհանուր տուն չէր և լինի այնտեղ հանգրվանող ժողովուրդների համար, ուստի 1762 թ. հատուկ մանիֆեստով թույլատրում է օտարերկրացիներին գալ եւ բնակություն հաստատել կայսրությունում: Ներգաղթողներին վերադասվում են մի շարք արտոնություններ, սահմանվում է կրոնական հանդուրժողականություն, յուրաքանչյուր ոք իրավունք է ստանում ազատորեն հետեւելու իր դավանանքին: Քանի որ սահմանափակումը դեռ գործում էր միայն հայերի նկատմամբ, սեմատը 1763 թ. հունիսի 9-ին հատուկ հրամանով հայերին թույլատրում է կառուցել եկեղեցիներ: Դրանով ուժը կորցրած է համարվում 1742 թ. եկեղեցիների կառուցումն արգելող որոշումը (Barkhudaryan, 2010):

Ազգային եկեղեցի կառուցելու նշանակին է ձեռնամուխ լինում Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի կայացման եւ ամրադրման նախահայրը՝ **Հովհաննես Աղազարի Եղիազարյանը**՝ Աղազար Նազարեթյանի՝ Ռուսաստանի եւ Պարսկաստանի հետ դիվանագիտական եւ առևտրային կապերի մոնոպոլիստների թարգմանչի որդին, որը ժուռական գրավոր աղբյուրներում հիշատակվում է **Իվան Լ. Նազարե** անունով (Meruzhanyan, 2023): Լինելով թանկարժեք քարերի՝ հիմնականում ադամանդի առավանճառքով զբաղվող առևտրական, մասնաճյուղի նախաձեռնող, բանիմաց, ազգասեր, մեծահարուստ բարերար, հետագայում մասնաճյուղի քաղաքականության հարցերում Եկատերինա II թագուհու խորհրդատուն՝ 1770 թ. դիմում է նրան՝ Սանկտ Պետերբուրգում եւ Մոսկվայում հայկական եկեղեցիներ կառուցելու խնդրանքով: Սանկտ Պետերբուրգում եկեղեցու կառուցման նշանակով տարածք է հատկացվում քաղաքի կենտրոնում՝ Նեւայի լողոտայում: Թույլտվություն ստանալուց հետո Նազարեաները՝ Իվան Նազարեան ու նրա

եղբայրները, եկեղեցու հատակագծումն առաջարկում են ժամանակի լավագույն ճարտարապետներից մեկին՝ Էրմիտաժի, Պալատական եւ Սենատային հրապարակների, գոթական ոճով ռուսական եկեղեցիների հեղինակ Գ. Ֆելտենին (Meruzhanyan, 2023): Եկեղեցու շինարարությունը շարունակվել է 1771-1776 թթ., որի համար ծախսվել է 33000 ռուբլի: Կառուցումն իրականացվում է Ի. Լազարեւի հովանավորությամբ, ինչդեռ նաեւ հայ մեծահարուստ հավատացյալների նվիրատվություններից գոյացած միջոցներով: Եկեղեցին անվանվում է Ի. Լազարեւի կնոջ՝ տարածքի սեփականատեր Եկատերինա Լազարեւայի անունով (Meruzhanyan, 2023):

1780 թ. փետրվարի 18-ին Աստրախանից ժամանած արքեպիսկոպոս **Յովսեփ Արղությանի (Երկայնաբազուկ)** կողմից կատարվում է Սուրբ Եկատերինա (Սբ. Կատարինե) հայկական եկեղեցու հանդիսավոր օծման արարողությունը: Թեւեւ օծման արարողությանը կայսրուհին չի մասնակցում, սակայն, ինչդեռ դատարանություն է վկայում, հետագայում մի քանի անգամ ներկա է լինում եկեղեցական արարողություններին (Nazaryan, 2010):

Հայկական եկեղեցին՝ «Նեւայի լողոտայի երկնագույն ճարգարիտը», դառնում է հայ համայնքին միավորող եւ ամրապնդող կարեւորագույն կառույցը:

Իր գործունեությունից վաթսու տարի անց՝ 1841 թ., եկեղեցին ենթարկվում է առաջին հիմնամորոգման (Meruzhanyan, 2023): Ավելի ուշ՝ 1930 թ., փակվում է, ծառայում որդես հակաօդային դաշտդաշտության շտաբ, այնուհետեւ միջնադատներով բաժանվելով երկու հարկի՝ շուրջ 60 տարի գործածվում է որդես երաժշտական կոմեդիայի թատրոնի դեկորացիաների դատարանական արհեստանոց եւ դահլիճ:

1993 թ. Սանկտ Պետերբուրգի հայկական համայնքի խնդրանքով քաղաքային իշխանությունը եկեղեցու շենքը վերադարձնում է հայ համայնքին: 1993 թ. եկեղեցու աղոթատունը մաքրվում է, կատարվում է առաջին դատարագը, որից հետո սկսվում են վերականգնման աշխատանքները (“Hayery Sankt Peterburgum,” 2024):

2000 թ. տեղի է ունենում Ս. Կատարինե եկեղեցու վերածածնում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Զ-րդի ձեռնած: Արարողությանը ներկա էին Մոսկվայի եւ համայն Ռուսիո դատարիարք երջանկահիշատակ Ալեքսի Զ-րդը, քաղաքապետ Յակովլեւը, դաշտդաշտատար այրեր, հավատացյալ հայորդիներ (Nazaryan, 2010):

Սանկտ Պետերբուրգում հիմնադրված հայկական մյուս եկեղեցին *Սուրբ Հարությունն է*: 1791 թ. ռուս-շվեդական դատերագմի ժամանակ զոհվում է մեծանուն բարերար Ի. Լազարեւի 23-ամյա միակ որդին: Հուղարկավորությունից հետո Լազարյանները դիմում են կայսրուհի Եկատերինա Զ-րդին, որդեսգլի վաղաճեմիկ որդու գերեզմանի վրա եկեղեցի կառուցելու իրավունք ստանան: Կայսրուհու համաձայնությունը չի ուշանում, եւ Սմոլենսկի գետի ափին՝ լյութերական գերեզմանատան կողքին, տարածք է հատկացվում: 1794 թ. Յովսեփ Արղությանի (Երկայնաբազուկ) կողմից կատարվում է եկեղեցու օծման արարողությունը (Meruzha-

nyan, 2023): Կառուցված աղոթատունը հետագայում դառնում է նաեւ ազգային-մշակութային կենտրոն:

1901 թ. ճարտարապետ Ալեքսանդր Կոչետովի նախագծով եկեղեցու կողքին կառուցվում է վանատուն, որի ղափտերը զարդարված են հայկական ճարտարա-դեկորացիայով հատուկ տարբեր նախշաքանդակներով:

1930-ական թթ. եկեղեցին փակ էր, տարածքն օգտագործվում էր որդես քանդակագործների արհեստանոց: Միայն տասնամյակներ անց՝ 1988 թ., Լենինգրադի քաղաքային խորհրդի գործկոմի որոշմամբ Սբ. Հարություն եկեղեցին հանձնվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնօրինությանը: ԽՍՀՄ տարածքում փակված հայկական եկեղեցիներից Ս. Հարությունն առաջինն էր, որի զանգերը հոգետը կյանքի զարթոնք են ավետում: Վերաբացումից հետո այստեղ առաջին գոհաբանական աղոթքը կատարում է Սանկտ Պետերբուրգի հոգետը հովիվ **Տեր Եզրաս արքեպիսկոպոս**, որն այժմ Ռուսաստանի եւ Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդն է եւ մեծ ներդրում ունի հայկական ամայացած եկեղեցիների վերաբացման ու նորոգման գործում (Angaladyan, 2010):

Սուրբ Հարություն եկեղեցու գերեզմանատանն են հանգչում Ի. Լ. Լազարեն ու ընտանիքի անդամները, նրանց հետ փոխկապակցված, հայկական համայնքի կյանքում կարեւոր նշանակություն ունեցած անձինք (Meruzhanyan, 2023): Եկեղեցու շուրջն աստիճանաբար ձեւավորվում է գերեզմանատուն, որը կոչվում է Սմոլնիի հայկական գերեզմանոց:

Սանկտ Պետերբուրգի հայկական երկու եկեղեցիներն այժմ գործում են եւ կարեւորագույն նշանակություն ունեն հայ համայնքի համախմբման, նրա հոգետ-եկեղեցական կյանքի կազմակերպման հարցերում:

*«Մի հատ սենց փոքր միմի մողել ենք Հայաստանի:
Իմ կարծիքով հենց եկեղեցին ա, որ սենց մագնիսի
մեզն մեզ կողմնում ա իրար»¹:*

Ինչդեռ հայկական սփյուռքի բոլոր համայնքները, Սանկտ Պետերբուրգի համայնքը եւս հիմնականում համախմբված է եկեղեցու շուրջ: Հատկանշական է, որ եկեղեցուն կից հայկական դպրոց հաճախելու համար կարեւոր դեր է երեխայի կնքված լինելը, եկեղեցի հաճախելը: Հայեցի կրթությունը, դաստիարակությունը, հայկական մշակույթը, առհասարակ, հայկականությունը դաժնաբեր են ու զարգացնելն այս միջավայրում առաջնահերթություններ են:

Սանկտ Պետերբուրգում աղյուսակային մշակութային եւ գիտական կյանքը. հայ տղազրոյթյան սկիզբը Ռուսաստանում

18-րդ դարի 80-ական թվականների քաղաքական կյանքի մթնոլորտը Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում բարեկարգ տղայաններ է ստեղծում նաեւ մշակութային, քաղաքակրթական զարգացման համար:

1780 թ. Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի (Երկայնաբազուկ) միջնորդու-

թյամբ Լոնդոնից Սանկտ Պետերբուրգ է տեղափոխվում մորջուղայեցի **Գրիգոր Խալդարյանը**: Նա Ջ. Ռիվինգտոնի տղարանում հրատարակել էր հայալեզու, լատիներեն զուգահեռ թարգմանությամբ «Հայ եկեղեցու հավատի խոստովանություն» գիրքը՝ վաղ միջնադարյան հայ գրականության ստեղծագործություններով (Meruzhanyan, 2023): Գ. Խալդարյանը շատ էր ցանկանում սեփական տղարան ունենալ: Նա հղանդիայում ղատվիրում է հայկական տառեր եւ գալով Պետերբուրգ՝ հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի աջակցությամբ Նեայի ղողոտայում գործող Ս. Կատարինե եկեղեցու բակի կցակառույցում հիմնադրում է հայկական տղարան: 1781 թ. Պետերբուրգում լույս է ընծայվում Ռուսաստանում հայերեն առաջին գիրքը՝ «*Արքեմարանը*»: 1781-1788 թթ. ընթացքում այստեղ տղագրվում է 18 անուն հայերեն գիրք, որոնց թվում էին Ներսես Ծնորհալու երկերը, Եղիշեի «Վարդանի եւ Հայոց ղատերագմի մասին» աշխատությունը: Գ. Խալդարյանը կազմում եւ տղագրում է հայ-ռուսերեն շուրջ 2500 բառ ղարու-նակող առաջին բառարանը՝ «Գիրք, որ կոչի շաիղ լեզուագիտութեան» (Miqayelyan, 2003): Բառարանի վերջում զետեղված է Ն. Ծնորհալու «Հաատով խոստովանիմ» աղոթքը՝ հայերեն եւ ռուսերեն տարբերակներով: Առաջին հայ-ռուսերեն բառարանից հետո Պետերբուրգի տղարանը հրատարակում է Կլեոդատրա Սարաֆովայի «Գիրք, որ կոչի Իմացութեան բանալի, այբբենարան, բառարան եւ որոշ բարոյախոսական կանոններ» ձեռնարկը: Գրքի առաջին մասում ներկայացվում են ռուսերեն եւ հայերեն տառերը՝ փոխադարձ համաղատասխանությամբ, որին հաջորդում է բառարանը՝ հայատառ ռուսերեն, ռուսատառ հայերեն, հայալեզու եւ ռուսալեզու օրինակներով (Grigoryan, 1979):

Հայ ղարբերական մամուլը եւ մշակութային կազմակերղությունները Սանկտ Պետերբուրգում

Սանկտ Պետերբուրգում հայ ղարբերական մամուլի առաջնեկը «**Հիւսիսն**» էր, որը 1863 թ. հիմնադրել էր Ռ. Պատկանյանը: Նա առաջինն էր, որ հրատարակման թույլտվություն ստացավ, սակայն թերթը շղետք է ունենար քաղաքական բաժին: Ռ. Պատկանյանը նախարարոյանը նախաղես իրազեկել էր, որ թերթում զետեղվելու են հայ համայնքի կյանքի մասին միայն ղաշտոնական հաղորդումներ՝ առանց վերլուծությունների (Meruzhanyan, 2023): Նրա հիմնական մղատակն էր ներկայացնել իր ժողովրղի ղատմոյան լավագույն էչերը, բարձրացնել համայնքի մշակութային-լուսավորչական մակարղակը: Քաղաքական բաժնի բացակայոյան ղատճառով, սակայն, որն, ըստ էույան, ընթերցողների համար ամենահետաքրքրականն էր, 1864 թ. «Հիւսիս» թերթը սակավ բաժանորղագրոյուն ունենալու ղատճառով փակվեց՝ ղատմոյան մեչ մնալով որղես Սանկտ Պետերբուրգում առաջին հայկական ղարբերական հրատարակոյուն:

«**Հայկական աշխարի**» ամենամյա ամսագիրը, որը լույս է տեսել 1864-1871 եւ 1874-1879 թթ., հայկական մանկավարժական մտքի առաջին ղարբերական հրատարակոյուններից է: Սկզբնաղես կոչվել է «Հայկական աշխարի կռունկ»:

1883 թ. նորից վերանվանվել է եւ լույս տեսել «Մանկավարժականոց» անվանումով: Ամսագրի հիմնադիրը եկեղեցական եւ հասարակական գործիչ, Պոնտ, հայ հնագույն գրականության թարգմանիչ **Խ. Ստեֆանին** էր՝ Ի. Բագրատունի գրական կեղծանվամբ (Meruzhanyan, 2023):

1884-1887 թթ. Պետերբուրգի Ի. Ա. Սկորոխոդովի տղարանում Խորեն Ծայրագույն վարդապետ Ստեփանեի խնամքությամբ հրատարակվում է «**Մանկավարժականոց**» մանկավարժական եւ գրական ամսագիրը, որում տեղ են գտնում մանկավարժական հոդվածներ, դրոշմական վիճակագրություններ, տեղեկություններ, հաշվետվություններ եւ այլն: Ամսագրի մյուս՝ գրական բաժնում զետեղվում են գրականագիտական հոդվածներ, հիշատակարաններ, տեղագրություններ, կենսագրականներ եւ այլն: Հատկանշական է, որ «**Մանկավարժականոց**»-ն առաջին տարբերական էր, որը հրատարակում էր ազգային դրոշմներում ավանդվող առարկաների վեցամյա ընդհանուր ծրագիրը՝ աշակերտական կանոններով եւ դաստիարակների հրամաններով (Mkrtchyan, 2023):

Մայրաքաղաքային հայկական տարբերական մամուլում առավել երկարակյաց էր «**Արաքս**» գրական-գեղարվեստական տատկերագարող ամսագիրը, որը 1887 թ. հիմնադրել էր բանասիրության ֆակուլտետի ուսանող **Ս. Գուլամիրյանը**: Ամսագրի կարեւոր ուղղություններից էին Հայաստանի տնտեսության, մշակույթի, ազգային դրոշմների եւ եկեղեցիների մասին հաղորդումները: «**Արաքս**»-ը հայ մտավորականության շրջանում մեծ ժողովրդավարություն էր վայելում: Իր բովանդակության, հետաքրքիր, գրագետ, լուրջ հոդվածների եւ բարձրակարգ տատկերագարողման շնորհիվ 1898 թ. այն Չիկագոյում արժանանում է մեդալի եւ տատկավոր դիմումի (Meruzhanyan, 2023): Նշվում է, որ բարձր ոճի եւ առաջադեմ գաղափարների շնորհիվ «**Արաքս**»-ը չէր զիջում արեւմուտքի ամսագրերին: Հարուստ էր վիտագրության բաժինը, որում մեծ մասամբ տեղ էին գտնում ռուս եւ եվրոպական դասականների գործերի թարգմանություններ, որոնց միջոցով ռուս եւ համաշխարհային գրականության ստեղծագործությունները հասու էին դառնում հայ ընթերցողին: Կարեւոր տեղ էին գրավում նաեւ գրական բնագիտությունը, հուշագրությունը եւ այլն (Miqayelyan, 2003): «**Արաքս**»-ի համարներում տեղ են գտել նաեւ Կիլիկիայի բարբառի եւ ազգագրության, Թոխատի եւ Խարբերդի բնական հարստությունների եւ լեռնահանքային արդյունաբերության մասին հոդվածներ (Mkrtchyan, 2023):

1902 թ. Եվրոպա կատարած երկարատեւ գործուղումից Պետերբուրգ է վերադառնում **Ն. Ադունցը**: Երբեմնի ուսանողը գրավում է անվանի արեւելագետ Ն. Մառի ուշադրությունը եւ նրա հովանու ներքո դառնում բազմակողմանի տատրաստված գիտնական: Երազանք ունենալով հայկական մտավորական սերնդի ձեւավորումը՝ 1903 թ. նա հիմնադրում է «**Բանբեր գրականութեան եւ մշակույթի**» տարբերականը՝ տարեկան երկու համարով (Meruzhanyan, 2023): Պարբերականի առաջին՝ 256 էջերից բաղկացած համարում Ադունցը մանրամասն ներկայացնում է մշակույթի դերն ու նշանակությունը, կատարում արժեքավոր վերլուծություններ եւ, որոշեալ տատմաբան, հրատարակախոս, գրականագետ, լեզվաբան ու մշակութաբան, առաջադրում նորանոր, առաջադեմ գաղափար-

ներ: Ամսագիրը հրատարակում է նաեւ ժամանակակից հայ գրողների՝ Յ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Յ. Յովհաննիսյանի, Սիամանթոյի, Վ. Փափագյանի եւ այլոց ստեղծագործությունները՝ նդաստեղծով հայ գրականության, արվեստի, գրական լեզվի տարածմանը: Ձեռնեղվում են նյութեր Յայաստանում տիրող իրավիճակի, հասարակական-քաղաքական հոսանքների եւ հայ իրականության մասին: Երկրորդ համարից հետո ֆինանսական հանգամանքների դատնառով դարբերականը փակվում է (Miqayelyan, 2003):

Ռուսական առաջին հեղափոխությունը սկսվելուն դեռ ազգային հրատարակությունների հնարավորություններն ընդլայնելու հույսեր են ծագում: Գիշտ է, Տիգրան Յարությունյանի՝ 1905 թ. Պետերբուրգում «**Ծիածան**» ամսագիր հրատարակելու փորձը ձախողվում է, բայց 1906 թ. սկսած՝ հաջողվում է մայրաքաղաքում իրականացնել ամենամսյա երգիծական «**Սափրիչ**» լրագրի հրատարակությունը: Լրագիրը լույս է տեսնում մինչեւ 1908 թ.՝ զեղարվեստական ակադեմիայի ուսանող Դավիթ Օբրոյանի խմբագրությամբ:

1910 թ. Ա. Ն. Կոտելնիկովը ձեռնամուխ է լինում «**Ժգն Կավկազ**» ամսօրյա լրագրի հրատարակությանը, որը լուսաբանում է Այսրկովկասի եւ Յյուսիսային Կովկասի հատկապես հայ համայնքների հասարակական եւ քաղաքական կյանքը: Լրագիրը կարողանում է բավարարել նաեւ Պետերբուրգի կովկասյան հայրենակցական միությունների դահանջարկը: Լրագրում զետեղվում են քաղաքական տեսություններ եւ գիտական հոդվածներ: Լրագրի առաջատար աշխատակիցներից էր մշանավոր տնտեսագետ Վահան Տոտոնցյանը (Miqayelyan, 2003):

Պետերբուրգի նախահեղափոխական ժամանակաշրջանի հայերեն վերջին հրատարակությունը Գ. Մեսեյանի խմբագրությամբ 1913 թ. լույս տեսնող գրական-զեղարվեստական, քննադատական «**Շողեր**» ժողովածուն էր (Miqayelyan, 2003):

Սանկտ Պետերբուրգի հայկական համայնքում աստիճանաբար ձեւավորված մշակութային, գիտական կյանքը 19-րդ դարի երկրորդ կեսից եւ 20-րդ դարի սկզբից մեն վերելք է աղրում՝ շնորհիվ Պետերբուրգում լավագույն կրթություն ստացած եւ կազմակերպված հայ երիտասարդության: Յայ երիտասարդները կարեւորագույն դերակատարում ունեին ոչ միայն հայ համայնքի, այլեւ մայրաքաղաքի կյանքում: Պետերբուրգում կազմակերպվում է մտավորականների «**Մարտ**» խմբակը (1880-1900 թթ.) Մ. Վարդանյանի եւ Մ. Սերոբյանի՝ սոցիալ-դեմոկրատական «**Յնչակ**» կուսակցության առաջա հիմնադիրների շուրջ, որը գոյություն ունի ցայսօր: Յարկ է մշել, որ նախահեղափոխական Պետերբուրգում են սովորել գիտության եւ մշակույթի մեծանուն ներկայացուցիչներ՝ մշանավոր զեղանկարիչներ **Յ. Այվազովսկին, Յ. Յովնաթանյանը, Ս. Ներսիսյանը, Գ. Բաշինջադյանը**, ազատության երգիչ **Մ. Նալբանդյանը**, անվանի կոմոդիտորներ **Մ. Եկնայանը** եւ **Ալ. Սդեմդիարյանը**, օդերային երգիչ, ժամանակի լավագույն քնարական-դրամատիկական բարիտոն **Բ. Ամիրջանյանցը**, մեն դերասան, նկարիչ, բանաստեղծ եւ փիլիսոփա **Պ. Ադամյանը**: Ադամյանը ճանաչվել է Յանվետի՝ 19-րդ դարի երկրորդ կեսի լավագույն դերակատարը: Էռնեստո Ռուսին, որն անգլուգական Յանվետ էր համարվում, տեսնելով Ադամյանին այդ դերում, իր լուսանկարն է մվի-

րում հետեւյալ ընծայագրով. «Աղանյանի՝ աշխարհում առաջին Յանւետին» (Angaladyan, 2010):

Այս շրջանում հայտնի էին ճարտարադէպական առաջա դասականներ **Գ. Տեր-Միքելովը, Լ. Բունիաթյանը, Ա. Թամանյանը**: Ավելի ուշ՝ 1914 թ., Ա. Թամանյանն ընտրվում է ակադեմիկոս, իսկ 1917 թ.՝ Գեղարվեստի ակադեմիայի խորհրդի նախագահ: Պետերբուրգում են դատմագիտական մտքի նրբություններին տիրադէտել ակադեմիկոս դատմաբաններ **Լ. Սդոնցը, Յ. Մամանյանը** (Angaladyan, 2010):

Հայ համայնքի կյանքում մոր փուլ է սկսվում 1917 թ. հեղափոխությունից հետո: Դրա առաջնորդի անվամբ վերանվանված Լենինգրադում էլ հայկական սփյուռքը շարունակում էր առաջատարներից մեկը լինել մշակույթի, գիտության, տեխնիկայի բնագավառներում: Հիշատակելի են գումավոր հեռուստատեսության հիմնադիր **Յ. Աղանյանի**, մեծանուն գիտնականներ, ֆիզիոլոգիայի ինստիտուտի ղեկավար **Լ. Օրբելու**, նրա կրտսեր եղբոր՝ Էրմիտաժի տնօրեն **Յ. Օրբելու**, աստղաֆիզիկոս, Լենինգրադի դեպարտմենտի համալսարանի դոկտոր **Վ. Համբարձումյանի**, ակադեմիկոս լեզվաբան **Լ. Մամի**, մշակույթի, գիտության բնագավառի այլ հեղինակների անուններ (Armenian Apostolic Church, 2024):

Սանկտ Պետերբուրգի հոգեմայրաքաղաքական ինստիտուտի շուրջ 40-50 հայ ուսանողների խումբը 1912 թ. ստեղծում է «Հայ ուսանողաց գրական-գիտական զարգացման միություն», որի նախագահն էր հայոց լեզվով ու ոգով կրթությունը զարգացնել (Acharyan, 2002):

Հայրենական Մեծ դատերազմի տարիներին եւ դրանից հետո հայկական համայնքը կարեւորագույն դերակատարում ուներ ռազմական, մշակութային, գիտության բնագավառներում: Հայ համայնքի ներկայացուցիչներից էին մեծ ողբերգակ **Վ. Փափագյանը**, ակադեմիկոս **Ա. Թախտաշյանը**, լուսագմացի առաջին ստեղծողներից **Ա. Քենուրջյանը** եւ այլք:

Հետխորհրդային շրջանում հայ համայնքի հոգեւոր-մշակութային կյանքի կազմակերպման հարցում կարեւոր նշանակություն ունեն Ս. Կատարինե եկեղեցուն կից գործող, 1995 թ. հիմնադրված Լազարյանների անվան կրթադաստիարակչական կենտրոնը, ռուս-հայկական մշակութային «**Վերնատուն**» կենտրոնը, «**Հաւատամք**» թերթը, Վետերանների խորհուրդը, «**Նոր սերունդ**» երիտասարդական կազմակերպությունը, «**Նաիրի**» թատրային համույթը, «**Աբ. Յիսիսիմե**» կանանց խորհուրդը եւ այլ կառույցներ:

«**Հաւատամք**»-ը երկլեզու թերթ է, որը ԽՍՀՄ փլուզումից հետո ՎՊՀ-ի առաջին հայկական թերթն է, հիմնադրվել է 1993 թ.՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի օրհնությամբ: Հիմնադիրը Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմն է (Mkrtchyan, 2023):

Սանկտ Պետերբուրգի հայ գրական եւ գիտական կյանքում նշանակալի դերակատարում ունեին նաեւ 1912 թ. Ռուսաստանի ԳԱ Ասիական թանգարանին կից կազմավորված **Արեւելագետների կոլեգիան** եւ հետագայում **ՌԴ ԳԱ արեւելյան**

Ճեռագրերի ինստիտուտը: Ինչդեռ իր հուշերում նշում է Կ. Յուզբաշյանը, Արեւելագետների կոլեգիան համախմբում էր արեւելագետների, որոնք անառարկելիորեն կատարում էին իրենց ղարտականությունները՝ կամովին, առանց որեւէ ղարտավորության (Yuzbashyan, 1971): 1818 թ. ստեղծվում է **Ասիական թանգարանը**, որը 1930 թ. վերակազմավորվում է որդես Արեւելագիտության ինստիտուտ, իսկ հետագայում ընդգրկվում է ՌԴ Գիտությունների ակադեմիայի կազմում՝ որդես **ՌԴ ԳԱ արեւելյան ճեռագրերի ինստիտուտ:** Սկզբնավորումից ի վեր այստեղ շարունակ բերվում են հայկական ճեռագրեր: Հայկական ճեռագրերի ժողովածուն ղահողանվել է Ռուստոյան Ռուբենի Օրբելու շնորհիվ, որը տարիներ շարունակ զբաղվել է հայկական եւ վրացական ճեռագրերի ուսումնասիրությամբ: Ժողովածուի առաջին համալրման մասին հիշատակվում է 1828 թ. ԳԱ արձանագրություններում, իսկ վերջին ամենախոշորը՝ 1919 թ.: Ճեռագրերից շատերն արժեքավոր հետազոտությունների հիմք են դառնում, մի մասն էլ դեռեւս սղասում է իր հետազոտողին: Այս ինստիտուտում երկար տարիներ հետազոտական գործունեություն են ծավալել *Ն. Մառը, Հ. Օրբելին, Ռ. Օրբելին, Կ. Յուզբաշյանը* (Mkrtchyan, 2023):

Սանկտ Պետերբուրգի հայ ժամանակակից համայնքային կյանքում կարեւոր դերակատարում ունեն մաեւ հասարակական կազմակերղությունները: Դրանցից է **«Պետերբուրգի հայեր»** հասարակական մահանգային կազմակերղությունը, որը կամավոր սկզբունքներով գործող ազգային միություն է եւ մղատակ ունի լուծելու հայերի ինքնության ղահողանման, լեզվի ու ազգային մշակույթի զարգացման, կրթության կազմակերղման հարցերը: Կազմակերղության անղան են Պետերբուրգի մտավորականության ներկայացուցիչներ, տարբեր կրոնների հետետորղներ, ինչդեռ մաեւ անհավատներ:

Համայնքի երիտասարղական կյանքում առանցքային դերակատարում ունի 2000 թ. հիմնաղղված **«Նոր սերունղ»** հայկական կազմակերղությունը: Այն ձեւավղղել է Սանկտ Պետերբուրղում 1985 թ. գղղություն ունեցող երիտասարղական միության հիման վղա, ակտիվացել 1997 թ., երբ Սուրբ Հարղություն եկեղեցու տարածքում սկսեցին ամեն կիրակի անցկացվել երիտասարղների հավաքներ: 2000-ականներից այս կազմակերղության երիտասարղներն ակտիվղղեն մասնակցում են հասարակական տարբեր միջղցառումների, որոնցից է 2010 թ. Սանկտ Պետերբուրգի հայկական համայնքի հիմնաղղման 300-ամյակին մղղղված հանղղիսավոր միջղցառումների շարքը (*“Hayery Sankt Peterburgum,” 2024*):

Հայղց լեզվի ուսղցումը Սանկտ Պետերբուրղում

Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելղց հետո ղետերբուրղյան հայ համայնքը մախկինի ղես շարունակում է կազմակերղված համայնքներից մեկը լինել: 1829 թ. Պետերբուրգի մահանգում բնակվում էր ընղամենը 111 հայ, որոնց մեն մասը հայախոս էին: Ռղղշակի տղղոս էին կազմում մաեւ առաջին սերնղի ձուղված ժառանգները եւ խառն անղսանղություններից ծնղված երեխաները: Հնչին

տոկոս էին կազմում նաեւ Վրաստանից եւ Յունաստանից գաղթածները: Սակայն կեցության բնական միջավայրին «համադատասխանելու» ձգտումն այնուամենայնիվ իր դերակատարությունն ուներ: Ինչդեռ կես դար անց ղեկավարության մեծահարուստների մասին լիարժեք գրքեր հրատարակախոս Ստ. Նազարյանը, «հայերեն մի քանի բառ գիտեն միայն, բացահայտ ժխտում են իրենց հայկական ծագումը, ավելի շատ ռուս, քան հայ են ցանկանում լինել» (Meruzhanyan, 2023):

Չգալով ճուշման անխուսափելիությունը՝ հայ համայնքի առաջնորդները հաստատում են սփյուռքի դերակատարությունը մայրենի լեզվի դաստիարակման վերաբերյալ նախագիծ: Նշվում է, որ դեռեւս 1800 թ. Պետերբուրգում գործում էր հայկական դպրոց, որը տեղակայված էր Նեւայի դպրոցային եկեղեցական տներում (Areshyan, 1957): Դպրոցն օգտագործում էր մայրենի լեզվի դասագիրք, որը տղազրվել էր Գ. Խալաթյանի տղարանում: Սակայն մեկ դասագիրքը բավարար չէր: Դրա համար մայրաքաղաքի եկեղեցիների զբաղվող հովանավոր **Ք. Լազարեան**, որը մեծ ֆինանսական միջոցներ էր ներդնում լուսավորչական մոլատակների համար, հասավ այն բանին, որ հայերենը ներառվեց ղեկավար ուսումնական ծրագրերում (Meruzhanyan, 2023):

Հայաստանի՝ Ռուսաստանի կայսրության կազմում ստացած նոր՝ նահանգի կարգավիճակի դերակատարությունը 1831 թ. կառավարությունը թույլ տվեց հայոց լեզվի ուսուցումը «դաշտոնական հաստատությունում», ինչը հայ երիտասարդության էական ներհույս առաջացրեց դեռի ռուսական խոշոր կենտրոններ: Նրանք հիմնականում բարձր խավի ներկայացուցիչներ, դաշտոնյաների զավակներ էին, որոնք կայսրության զինվածականներում հիմնարար կրթություն եւ դատարանականություն էին ձեռք բերում: Դրանից հինգ տարի անց՝ 1836 թ. հրատարակված «Ռուսաստանում Հայ-Գրիգորյան եկեղեցու գործերի կառավարման մասին դրույթի» համաձայն, առաջին անգամ օրինական կերպով թույլատրվեց Ռուսաստանում ունենալ հայկական ուսումնական հաստատություններ (Meruzhanyan, 2023):

Դրանից բացի՝ Նիկոլայ թագավորը թույլ տվեց հայերենի եւ հայերենով Աստծո օրենքի դասավանդումը մայրաքաղաքի զինվորական ուսումնական հաստատությունների հայ կուրսանտներին: Որոշումն ընդունվել էր առավելադաս եկեղեցու սարկավազ **Յ. Յ. Օրբելու** (1812-1891) գործադրած ջանքերի շնորհիվ (Meruzhanyan, 2023): Նա էլ 1836 թ. դարձել է Պետերբուրգում «մայրենի բարբառով» հայոց լեզվի դասավանդման առաջին ուսուցիչը: Սակայն կլիմայական բարդ դրամաները ստիպում են Օրբելուն տեղափոխվել Թիֆլիս: Նրանից հետո հայերենը եւ Աստծո օրենքը դասավանդում է **Մովսես Տեր-Մովսեսյանը**, այնուհետեւ՝ **Գևորգ Խրջանցը**:

1849 թ. Պետերբուրգի ուսումնական հաստատություններում հայերի թիվը հասնում էր երկու հարյուրի: Մայրենի լեզուն եւ Աստծո օրենքը դասավանդվում էր ամեն օր, երեք ժամով (Meruzhanyan, 2023):

1.2. ՀԱՆՐԱՆՈՒՄԻ ԲԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Լեզուն ճարդու հասարակայնացման հիմնարար գործիքներից է, որը կենսական նշանակություն ունի սոցիալական եւ մշակութային տարբեր միջավայրերում անհատների միմյանց հետ փոխհարաբերվելու գործում: Այս կամ այն լեզվով հաղորդակցվելու կարողությունն այս համատեքստում դուրսին է դարձնում ոչ միայն բուն հաղորդակցությունը, այլեւ փոխադարձ ըմբռնումն ու տվյալ իրադրության մեջ եւ միջավայրում ներգրավումը:

Երկլեզու եւ բազմալեզու համայնքներում, որտեղ լեզվակիրները միաժամանակ կիրառում են երկու, երեք կամ ավելի լեզուներ, հանրալեզվաբանները լիարժեք են ուսումնասիրեն ոչ միայն զուտ տվյալ լեզուն ինքնին, այլեւ գործառնական տարբեր լեզուների միջեւ եղած բարդ հարաբերությունները: Խնդիրն այն է, թե ինչպես են այդ լեզուները գոյակցում եւ գործում տվյալ որոշակի հասարակության մեջ: Այս առումով շատ կարեւոր է հաշվի առնել հատկապես հետեւյալ ելակետային դրույթները:

■ **Լեզուների կիրառության սոցիալական ենթատեքստերը:** Կարելի է բացահայտել այն հատուկ ոլորտները, որտեղ գործառնական է յուրաքանչյուր լեզու, օրինակ՝ կրթության, կառավարության, լրատվամիջոցների եւ առօրյա կյանքում: Այսպես, երբեմն մեկ լեզուն կարող է զերակշռել լայնածավալ միջավայրում, ինչպիսիք են դպրոցները կամ լայնածավալ փաստաթղթերը եւ գրագրությունը, միմյանց մյուսը կարող է մախրնտրելի լինել ոչ լայնածավալ իրադրության մեջ կամ ընտանեկան միջավայրում:

■ **Դերի եւ գործառնական փոխհարաբերություններ:** Լեզուների փոխհարաբերությունների ուսումնասիրությունը հատկապես կարեւոր է դրանց ունեցած դերի եւ գործառնական առումով: Այսինքն՝ լիարժեք է հասկանալ, թե որ լեզուն է համարվում հեղինակավոր կամ զերիշխող, որն է ծառայում որպես «lingua franca» տվյալ հաղորդակցության ժամանակ, եւ ինչպես կարող են փոխվել այդ դերերը՝ կախված համատեքստից կամ լսարանից:

■ **Լեզուների հիերարխիա:** Գործառնական լեզուների միջեւ եղած հիերարխիան հասկանալը նույնպես էական նշանակություն ունի: Ըստ այդմ-լիարժեք է որոշել, թե որ լեզուն է համարվում «գլխավոր», որն է համարվում լայնածավալ, եւ որն է համախ կիրառվում առօրյա եւ ներքին հաղորդակցության ժամանակ: Այդ հիերարխիաները բացահայտելով՝ հմարավոր է մատչել համայնքի ներսում առկա լայնածավալ, քաղաքական կամ տնտեսական ազդեցությունները, որոնք գրեթե միշտ իրենց արտացոլումն են գտնում լեզվում:

■ **Մշակութային ինքնություն:** Լեզուն ամուր թելերով կապված է մշակութային ինքնությամբ: Հաճախ լեզվական համայնքները առաջնահերթություն են տալիս այս կամ այն լեզվին՝ ելնելով դրա լայնածավալ մշակութային, մշակութային ազդեցությունից եւ այլն: Հետեւաբար շատ կարեւոր է մախրան տվյալ համայնքի ինքնությունն ուսումնասիրել լայնաբեր, թե ինչպես է գործառնական լեզուներից յուրաքանչյուրն ազդել տվյալ համայնքի ինքնության ձեւավորման վրա:

■ **Լեզվի փոփոխություն:** Գիտենք, որ լեզուները փոխվում են ժամանակի ընթացքում՝ կախված լեզվակիրների առկայությունից կամ բացակայությունից, լեզվական քաղաքականությունից, սոցիալտնտեսական իրադրությունից, միգրացիոն տեղաշարժերից եւ այլն: Ըստ այդմ՝ կարելի է նաեւ դարձել այդ արտալեզվական գործոնների դերը եւ ազդեցությունը տվյալ լեզվի փոփոխության գործում:

Երկլեզու եւ բազմալեզու հանրություններում ուսումնասիրելով վերը նշված գործոնները՝ կարելի է ավելի խորությամբ հասկանալ, թե ինչդեր է լեզուները զոյակացում, ազդում միմյանց վրա եւ հասարակական փոխհարաբերություններ ձեւավորում՝ վեր հանելով հաղորդակցության եւ մշակութային փոխանակման բարդ համակարգը:

Հանրալեզվաբանական կարելի է հասկացություններից է **լեզվական հանրություն:** Այն այնպիսի մարդկանց ամբողջություն է, որոնք միավորվում են հասարակական, տնտեսական, քաղաքական եւ մշակութային կաղերով, առօրյա կյանքում հաղորդակցվում տվյալ հանրության համար ընդհանուր մեկ լեզվով: Որդես լեզվական հանրության կարող եւ դիտարկվել մարդկանց խմբերը՝ անկախ ներառվող անհատների քանակից, օրինակ՝ որեւէ երկիր, ղեկություն, ընտանիք, սոցիոտային թիւ եւ այլն: Ուստի յուրաքանչյուր հանրության առանձնացման նախադրման կարող եւ համարվել հասարակական կյանքի ընդհանրությունը եւ դարբերական հաղորդակցման առկայությունը: Լեզվական որեւէ մեծ հանրության կարող է ներառել ավելի փոքր հանրություններ (Sargsyan et al., 2023): Օրինակ՝ Ռուսաստանի Պաշտպանությունը՝ որդես մեծ հանրության, ներառում է տարբեր քաղաքների հանրությունները, կամ Սանկտ Պետերբուրգը՝ որդես մեծ հանրության, ներառում է բուն քաղաքի եւ տարբեր արվարձանների հանրությունները, դրանք էլ իրենց հերթին՝ տարբեր հաստատությունների, ձեռնարկությունների հանրություններ:

Մեր հետազոտության համար որդես լեզվական հանրության ընտրել ենք **Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը:** Հանրալեզվաբանական քննություն իրականացնելու համար մեր հետազոտական խումբը դաշտային աշխատանքներ է իրականացրել Սանկտ Պետերբուրգում, հավաքել է անհրաժեշտ տեղեկություններ լեզվական հանրության եւ գործառնական լեզուների վերաբերյալ, քննել փոխներթափանցումների եւ փոխազդեցությունների հետեւանք հանդիսացող հատկանիշները, հայերենի վրա օտար լեզուների դրական եւ բացասական ազդեցությունը: Կատարել ենք **ներկայացուցչական ընտրանք**՝ առաջնորդվելով լեզվական հանրության սեռատարիքային առանձնահատկություններով, հասարակական - մասնագիտական կարողություններով, ինչդես նաեւ տարածքային տեղակայումով:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք որակական եւ քանակական մեթոդաբանության գործիքակազմ: Քանի որ մեր հետազոտությունը հիմնականում որակական է, գերազանցադես կիրառել ենք **որակական մեթոդներ:** Սույն հանրալեզվաբանական քննության նոյատակն է ներկայացնել ռուսալեզու միջավայրում ադորող լեզվական հանրության բնորոշ հասարակական երեւոյթների որակական ասոցիեկտների ընթերնումը բնական, ոչ փորձարարական դայման-

ներում: Մեր մասնավոր վերլուծական մոլատակն առկա ենթատեքստի վերհանումն է, օրինակ՝ ինչդե՞ս են տնտեսական, քաղաքական, հասարակական, մշակութային եւ կազմակերպական գործոններն ազդում լեզվական հանրության վրա:

Որակական մեթոդներից կիրառել ենք **խորքային հարցազրույցների մեթոդը**: խորքային հարցազրույց ենք իրականացրել համայնքի հասարակական ակտիվ դերակատարում ունեցող ներկայացուցիչների հետ: Հարցազրույցները ձայնագրվել եւ սղագրվել են, կատարվել է իմաստային-թեմատիկ վերլուծություն, որոշ դեղքերում համադատասխան մեջբերումները ներկայացրել ենք մեր հետազոտության համադատասխան գլուխներում:

Որակական մեթոդներից կիրառել ենք նաեւ **փորձագիտական հարցման մեթոդը**: Փորձագիտական հարցումն իրականացրել ենք փորձագետների երկու խմբերի հետ **նոմինալ խմբային մեթոդի** միջոցով, որով հնարավորություն ունեցանք մեկ հանդիպման միջոցով լսել դոկտրցական եւ բուհական համակարգերից որոշեա փորձագետ ընտրված դասավանդողներին: **Խմբային հարցազրույցներ** ենք իրականացրել համայնքների ներկայացուցիչների հետ, ադա ներկայացրել ենք հարցման դատասխանների ընդհանրացված տարբերակները:

Փաստաթղթերի վերլուծության մեթոդով ուսումնասիրել ենք Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի վերաբերյալ առկա գիտական գրականությունը՝ թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով, կատարել ենք արխիվային նյութերի ուսումնասիրություն, որոնք տրամադրել են մեր գործընկերները, ինչդե՞ս նաեւ մեր գործուղումների ընթացքում ծանոթացել ենք գրադարանների եւ արխիվների նյութերին:

Որակական մեթոդներից կիրառել ենք նաեւ **դիտարկման մեթոդը**: Հատկադեա արդյունավետ էր մեթոդի կիրառումը դոկտրցական եւ բուհական դասավւումների ընթացքում, համայնքային միջոցառումներին մասնակցելու, եկեղեցական ծիսակատարությունների ընթացքում:

Քանակական մեթոդներից մեր հետազոտության ընթացքում կիրառել ենք **հարցաթերթի մեթոդը**՝ ընդգրկելով բաց, փակ, կիսափակ հարցեր՝ ելնելով հարցի տիդից: Հարցաթերթի մեթոդով անցկացրել ենք անհատական հարցազրույց եւ առցանց հարցում: Քանակական հետազոտության արդյունքների ամփոփումը կատարելիս կիրառել ենք MS Excel ծրագիրը:

Հարցազրույցների, խմբային քննարկումներից ստացված ձայնագրությունները, դիտարկումների ընթացքում արված նշումները սղագրվել են, իրականացվել է թեմատիկ վերլուծություն: Երբեմն որակական տեղեկատվությունից հնարավոր է եղել դուրս բերել որոշակի քանակական բաղադրիչներ: Դրանք ներկայացրել ենք տոկոսային հարաբերակցությամբ՝ համադատասխան գծադատկերներով:

ԲՆԱԿԱԶՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ

Հայերը Սանկտ Պետերբուրգում հաստատվել են քաղաքի հիմնադրման սկզբից: 1700-ականների սկզբից հայ հասարակության ներկայացուցիչներից շատերը

գալիս եւ բնակություն են հաստատում Պետերբուրգում՝ դառնալով քաղաքի նշանավոր դեմքեր: Ցարի հրամանագրով հայ վաճառականներին թույլատրվում էր «Սանկտ Պետերբուրգում եւ այլ քաղաքներում ազատ առդել...»: Պետերբուրգում արդեն 1710 թ. կային «հայկական գրասենյակներ» (Miqayelyan, 2003):


Հայերի քանակի մասին սկզբնական շրջանում հստակ թիվ ասել հնարավոր չէ: Տեղեկություններ կարող ենք ստանալ այդ շրջանից մնացած փաստաթղթերից: 1722 թվականին Մինաս Վարդապետը Արտաքին գործերի կոլեգիային հասցեագրված զեկուցագրում խնդրում էր Պետերբուրգում հայերի 50 ծխի, եկեղեցու եւ գերեզմանատան համար տեղ հատկացնել (Miqayelyan, 2003): Հետագա տասնամյակներում հայ համայնքը շարունակում է աճել: 1897 թ. տվյալներով՝ Սանկտ Պետերբուրգում կար 550 հայ՝ հայկական եկեղեցիների ծխականներ (Miqayelyan, 2003):

Մեն եղեռնից փրկվածների մի մասը՝ Արեւմտյան Հայաստանից գաղթած հայերը, աղաստան են գտել Ռուսական կայսրության հարավի զրեթե բոլոր վարչական կենտրոններում եւ խոշոր քաղաքներում, այդ թվում՝ Սանկտ Պետերբուրգում՝ համալրելով հին հայկական համայնքները եւ հիմնելով նորերը, ինչի հետեւանքով հայ համայնքների թիվը կտրուկ աճել է: 1988 թ. Սոփիտակի երկրաշարժի եւ Հայաստանի շրջափակման հետեւանքով արտագաղթած հայերի հիմնական մասը հանգրվանել է Կրասնոդարի եւ Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի մարզում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, ինչդեռ նաեւ Ուրալի եւ Սիբիրի արդյունաբերական կենտրոններում: Չգալի թվով հայեր Ռուսաստան են գաղթել Ադրբեջանից եւ Աբխազիայից (Office of the High Commissioner for Diaspora Affairs of Armenia, 2025):

Ըստ Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոսության կայքէջի տվյալների՝ 1890 թ. քաղաքում բնակվել է 650 հայ, 1900 թ.՝ 1100, իսկ 1910 թ.՝ ավելի քան 2000: Այսօր, ընդամենը 4 տասնամյակում հայերի թիվը քառապատկվել է եւ կազմել քաղաքի բնակչության 0.1 տոկոսը: Ներկայումս, ըստ ղաշտոնական տվյալների, Սանկտ Պետերբուրգում բնակվում է 20-25 հազար հայ (Consulate General of Armenia in Saint Petersburg, 2025): Այս տվյալը հստակ չէ, քանի որ վերջին տարիներին մարդահամար չի իրականացվել: Բացի այդ՝ քաղաքում բնակվում են նաեւ քաղաքացիություն չունեցող, անօրինական առդող հայեր: Գործողման ընթացքում մեր աշխատանքային խմբին մասնակիցների հաղորդած տվյալները նույնպէս հստակ չէին, նշվում էր 40-ից մինչեւ 100 հազար հայերի մասին: Սակայն հարկ է հաշվի առնել, որ սա ղաշտոնական կամ գիտական տվյալ չէ, նաեւ հետազոտական հենք չունի: Սա ընդհանուր տվյալների հիման վրա ձեւավորված կարծիք է:

ԾՆԱԴԱՎԱՅՐԸ

ԱՐԴՅՈՔ ԾՆԱԿԵԼ ԵՔ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ




Հարցումների արդյունքում դարգվել է, որ հարցվողների զգալի մասը չի ծնվել Սանկտ Պետերբուրգում:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Հարցումների արդյունքում դարգվել է, որ հարցվողների գերակշիռ մասը ՌԴ քաղաքացի է, այնուհետև մեծ թիվ են կազմում երկքաղաքացիություն ունեցողները՝ Հայաստանի եւ Ռուսաստանի: Համեմատաբար փոքր մասը ՀՀ քաղաքացիներն են:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ




ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Սանկտ Պետերբուրգում դոկորոցական կրթությունն աղահիվում են 2 հաստատություններ՝ Հայ Առաքելական եկեղեցու Լազարյանների անվան հայեցի դաստիարակության կենտրոնը կամ Լազարյանների անվան կիրակնօրյա դոկորոցը եւ Միքայել Լորիս-Մելիքովի անվան թիվ 259 միջնակարգ դոկորոցը:

Բարձրագույն կրթության ոլորտում նշանակալից է Սանկտ Պետերբուրգի Պետական համալսարանի դերը: Համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի ամբիոնում դասավանդվում է արեւելագիտություն, այդ թվում՝ նաեւ հայագիտություն 1812 թվականից: Հայագիտության ուսուցումը ներառում է հայոց լեզու, հայ հին գրականություն, արդի գրականություն, Պոեզիայի խնդիրներ, Պատմագիտություն, աղբյուրագիտություն: Որոշ դասընթացներ իրականացվում են ՌԴ ԳԱ արեւելյան ձեռագրերի ինստիտուտի հետ համատեղ:

Հատկանշական է, որ հարցման մասնակիցների զգալի մասն ուներ բարձրագույն կրթություն, հիշատակելի է, որ նրանց մի մասն էլ կրթությունը ստացել է հենց Սանկտ Պետերբուրգում: Այս առումով զգալի է համայնքի աջակցող դերակատարումը, որի մասին հիշատակեցին եւ՝ ուսուցիչները, եւ՝ ծնողները, եւ՝ համայնքում ղեկավար դերակատարում ունեցող անձինք:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ




ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԿԱՄ ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԿԻՐԱԿԼՕՐՅԱ ԴՊՐՈՑ	Գործում է 1993 թվականից Սանկտ Պետերբուրգի Նեայի Պողոտա 40- 42 հասցեում՝ Սուրբ Կատարինե եկեղեցու հարեամությամբ:
ՄԻՔԱՅԵԼ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 259 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ	2006 թ. ստացել է եթնիկ ուղղվածու- թյուն՝ հայերենի ուսուցման ծրագրով, իսկ 2017 թ. դադարեցրել է շնորհիվ Միքայել Լորիս-Մելիքովի անունը:

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ


Հարցումների միջոցով փորձել ենք տարգել հարցվողների հայերենի իմացության մակարդակը: Հարցվողների 23 %-ը նշել է, որ հայերենի իր իմացությունը միջին մակարդակի է, միայն 58 %-ն է սահուն խոսում հայերեն, 10 %-ը նշել է, որ վատ է խոսում, եւ միայն 9 %-ն է, որ դժվարանում է կամ ընդհանրապես չի խոսում հայերեն:

ԻՆՉՊԵՍ ԿՐԱՆԱՏԵՔ ՀԱՅԵՐԵՆ ԽՈՍԵԼՈՒ ՁԵՐ ԿԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ




ՏԱՐԻՔԱՅԻՆ ՎՈՒՆՁՆԱՅԿԱՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարիքային բաժանումը կատարել ենք հետևյալ կերպ. մինչև 16 տարեկան, 17-25 տարեկան, 26-35 տարեկան, 36-65 տարեկան եւ 66 եւ ավելի: Այս բաժանումը շատ կարեւոր է, քանի որ, անկախ ամեն ինչից, խոսքում առկա են լեզվակրի տարիքային առանձնահատկություններ: Հարցվողների գերակշիռ մասը 36-65 տարեկաններն էին:



ՍԵՌՎՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՎՈՒՆՁՆԱՅԿԱՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հարցվողների գերակշիռ մասն իգական սեռի ներկայացուցիչներ էին: Հետազոտությունը ցույց տվեց, որ իգական սեռի ներկայացուցիչներն ավելի Պատրաստական եւ անկաշկանդ են հարցումների մասնակցելու առումով:



ՄԱՅՐԵՆԻ ԼԵՃՈՒՆ

Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը լեզուների տիրադեպիտման առումով ունի հիմնականում երկու տարբերակ՝ հայերեն եւ ռուսերեն: Ինչդեռ ցույց են տալիս հարցման արդյունքները, ղատկերը հիմնականում հետեւյալն է. ըստ հարցման արդյունքների՝ հարցվածների գերակշիռ մասը նշել է, որ իր մայրենի լեզուն հայերենն է, իսկ հարցվածների մնացյալ 28 % -ի մայրենին ռուսերենն է:


ՄԱՅՐԵՆԻ ԼԵՃՈՒՆ



ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԼԵՃՈՒՆ

Այստեղ ղատկերը հետեւյալն է. թեւեւ մայրենի լեզուն հայերենն է, սակայն ընտանիքների գերակշիռ մասի մոտ գործածվող հիմնական լեզուն ռուսերենն է:


ԸՆՏԱՆԻՔԸ



ՀԵՌՈՒՍԱՎՃԱՐՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԵՒ ԸՆԹԵՐՑՎՈՂ ՄԱՍՈՒԼԻ ԼԵՃՈՒՆ

Այսօր մեր իրականությունն անհնար է դատկերացնել առանց հեռուստատեսության եւ մամուլի: Եվ հնարավոր է, որ դրանցում գործածվող լեզուն եւս չհամընկնի այն կիրառողների մայրենիին: Այս հարցման դեղքում ունենք հետեւյալ դատկերը. գերակշռողը, ինչդեպ տեսնում ենք, ռուսերենն է:


ՀԵՌՈՒՍԱՎՃԱՐՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԵՐՑՎՈՂ ՄԱՍՈՒԼԻ ԼԵՃՈՒՆ



ՍՈՑԿԱՎՅՔԻ ԼԵՃՈՒՆ

Սոցկայքերը ներկայումս կյանքի անբաժանելի մաս են կազմում: Փորձել ենք դարձել, թե արդյոք հարցվողները կիրառում են հայերենը սոցիալական հարթակներում: Կիրառվող լեզուն գերազանցադեպ կրկին ռուսերենն է:

ՍՈՑԿԱՎՅՔԻ ԼԵՃՈՒՆ




ԿՐՈՆԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԳՐԻՔՐՈԻԹՅՈՒՆՆԵՐ

Սանկտ Պետերբուրգում հայերը վարում են ակտիվ հոգեւոր կյանք: Քաղաքում գործում է երկու հայկական եկեղեցի, որոնք ղատկանում են Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմին: Հայկական հոգեւոր կյանքի ամրապնդման հարցում կարեւոր դեր ունի Սուրբ Կատարինե եկեղեցին, որին կից գործում է մաեւ կիրակնօրյա դղորոցը: Այն կառուցվել է 1771-1776 թվականներին Պետերբուրգի նշանավոր հայ հովհաննէս Լազարյանի ջանքերով եւ միջոցներով: Եկեղեցու շինարարւթյունը հանձնարարված էր քաղաքի այն ժամանակվա առաջատար ճարտարապետ, հռչակավոր Յու. Ա. Ֆելտենին: Պետերբուրգի կենտրոնում՝ Նեւայի դողդոտա 40-42-ում, նրա կառուցած Սուրբ Կատարինե եկեղեցին հանդիսավորւթյամբ օծել է ռուսաստանյան հայերի թեմակալ առաջնորդ հովսեփ արքեպիսկոպոս Արղւթյանը 1780 թ.: Այդ շենքը մինչ օրս քաղաքի մայրուղու հոյակապ անսամբլի լավագոյն կոթողներից է (Miqayelyan, 2003):

Հարցումների միջոցով փորձել ենք տարգել, թե որքան է կարեւոր եկեղեցու եւ կրոնի դերը համայնքի կյանքում: Հատկանշական է, որ հարցվողների գերակշռող մասը կարեւոր է համարում:

ԿՐՈՆԸ ԿԱՐԵՎՈՐ Է ՁԵՁ ՀԱՍԱՐ



ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐԻՆԵ ԵԿԵՂԵՑԻ	Կառուցվել է 1771-1776 թթ. Հ. Լա-զարյանի հովանավորությամբ, 1780 թ. փետրվարի 18-ին օծել է Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը: 1930-1993 թթ. եկեղեցին չի գործել: 1993 թ. եկեղեցուն կրկին կատարվել են եկեղեցական արարողություններ, 2000 թ. վերածովել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի ձեռամբ:
ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ	Եկեղեցին կառուցելու թույլտվությունը ստացվել է 1790 թ., 1794 թ. Հովսեփ Արղությանի (Երկայնաբազուկ) կողմից կատարվում է եկեղեցու օծման արարողությունը: 1930-ականներին եկեղեցին չի գործել, 1988 թ. Լենինգրադի քաղաքային խորհրդի գործկոմի որոշմամբ Սբ. Հարություն եկեղեցու շենքը հանձնվել է հայ կրոնական միությանը: Առաջին զոհաբանական աղոթքը կատարել է Սանկտ Պետերբուրգի հոգեւոր հովիվ Տեր Եզրաս Բեդլա Ներսիսյանը:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՄԵՆՈՂ ՅԱՅԿԱՎԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

Սանկտ Պետերբուրգում լույս տեսնող եւ հայերին առնչվող տարբերականներից հիշատակման արժանի են հետեւյալները.

«ՅՅՈՒՄԻՍ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹ	Լույս է տեսել 1863-1864 թթ.: Խմբագիր-հրատարակիչն էր Ռաֆայել Պատկանյանը, աշխատակիցների թվում էին Գաբրիել եւ Քերովբե Պատկանյանները:
«ՅԱՅԿԱՎԱՆ ԱՇԽԱՐՀ» ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ	Լույս է տեսել 1864-71 եւ 1874-79 թթ., հայկական մանկավարժական առաջին տարբերական հրատարակություններից մեկն է: Սկզբնաղես անվանվելով «Հայկական աշխարհի կոունկ»՝ 1883 թ. նորից վերանվանվել է եւ լույս տեսել «Մանկավարժականոց» անվանումով: Ամսագրի հիմնադիրը եկեղեցական եւ հասարակական գործիչ, դոկտ, հայ հնագույն գրականության թարգմանիչ Խ. Ստեֆանյանն էր:
«ԱՐԱՔՍ» ՏԱՐԵԳԻՐՔ	Լույս է տեսել 1887-1898 թթ., հիմնադիրը եւ խմբագիրը եղել է Սիմոն Գուլամիրյանը:
«ԲԱՆԲԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ» ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ	Լույս է տեսել 1904-05 թթ., խմբագիրը տատմաբան Նիկողայոս Ադունցն էր:
«ՍԱՓՐԻՉ» ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ	Լույս է տեսել 1906-08 թթ., խմբագիրը եղել է Դավիթ Օբրոյանը:
«ԺԻՉՆ ԿԱՎԱԿԱՉԱ» ԼՐԱԳԻՐ	Լույս է տեսել 1910 թ., խմբագիրը եղել է Ա. Ն. Կոտեղմիկովը, որի հանկարծառու մահվան տատճառով էլ լրագրի հրատարակումը տեւել է ընդամենը մի քանի ամիս:

«ՇՈՂԵՐ» ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ	Լույս է տեսել 1913 թ., խմբագիրն էր Գ. Մեսեյանը: Սա Պետերբուրգում նախահեղափոխական ժամանակաշրջանի վերջին հայերեն հրատարակությունն էր:
«ՀԱՄԱՏԱՄՔ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ	Հիմնադրվել է 1993 թ.: Ամենայն հայոց Կաթողիկոս Վազգեն Առաքինի օրհնությամբ: Հիմնադիրը Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեանի հայոց թեմն է:
«ՄԵՐ ԳՈՐԾԸ» (НАШЕ ДЕЛО) ԹԵՐԹ	Լույս է տեսնում 2021 թ. նոյեմբերից, գլխավոր խմբագիրը Դոնարա Մկրտչյանն է:
«ՄԱՆԿԱՎԱՐԺՆՈՑ» ԱՄՍԱԳԻՐ	Հրատարակվել է 1884-1887 թթ. Պետերբուրգի Ի. Ն. Սկորոխոդովի տղարանում՝ Խորեն ծայրագույն վարդապետ Ստեփանեի խմբագրությամբ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱՅԵՐԵՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՄԱՐՏԱՆՐԱԿԵՐՆԵՐԸ
ՍԱՆԿՏ ԴԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

21-րդ դարում, համաշխարհայնացման գործընթացների ակտիվացման ու տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացմանը զուգընթաց, փոխվել են նաև տարածության ու ժամանակի ընկալման սահմանները: Չանագան հանգամանքներով լայնացված մարդկային ակտիվ տեղաշարժերը, ոչ իր հայրենիքում բնակվող մարդկանց թվի շարունակական աճն ավելի բարդ է բազմաշերտ են դարձնում նաև բազմալեզու միջավայրի լատկերը: Այս համատեքստում փոխվել է նաև Սփյուռքի ընկալումը, որը բազմաբնույթ միջավայր է՝ համայնքային, համազգային բազում առանձնահատկություններով:

Հայկական սփյուռքը ձևավորվել է տարբեր ժամանակներում, միանգամայն տարբեր իրավիճակներում հայտնված սփյուռքյան համայնքներից: Այն հատկապես համալրվել է ստվարացել է Օսմանյան կայսրության կողմից 1915 թ. իրականացված ցեղասպանությունից հետո, որի հետևանքով գրեթե ամայացավ Արեւմտյան Հայաստանը, իսկ ավելի ուշ՝ 1991 թ.՝ Խորհրդային Միության փլուզումից եւ քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ այլ ոլորտներում առաջացած համակարգային ճգնաժամից հետո (Torosyan & Vardanyan, 2018): Այսօր հայկական սփյուռքում, ինչպես իրեականի, իռլանդականի, հունականի դեղքում է, ազգությամբ ավելի շատ հայ է բնակվում, քան բնօրրանում. հայ ժողովրդի առնվազն երկու երրորդը բնակվում է իր բնօրրանից դուրս:

Ներկայումս հայկական սփյուռքի առջեւ ծառացած են մի շարք մարտահրավերներ, որոնցից են ազգային հաստատությունների գործունեության վերականգնման խնդիրը, մոր ձևավորված համայնքների ինքնակազմակերպման դժվարությունները, համայնքային կյանքում չընդգրկված մեծ թվով սփյուռքահայերի առկայությունը, ուժացման գործընթացի ավելացումը, խառնամասնությունների թվի աճը եւ այլն (Minasyan, 2018):

Սույն ուսումնասիրության շրջանակներում կդիտարկենք այնպիսի խնդիրներ, որոնք առնչվում են օտարալեզու միջավայրում հայերենի գործածությանը: Օտարալեզու միջավայրում հայերենի ուսուցումը լի է բազմաթիվ մարտահրավերներով ինչպես սովորողների, այնպես էլ դասավանդողների համար: Կախված երկրից, քաղաքական, կրոնական հանգամանքներից՝ խնդիրները կարող են տարբեր լինել: Օրինակ՝ ԱՊՀ երկրներում զնայով մեծանում է հայկական սփյուռքի ուժացման եւ հայության լեզվամշակութային ինքնության կորստի վտանգը: Առկա ուսումնական հաստատությունները, քիչ բացառություններով, ավելի շատ խմբակների են մնալ, որոնցում ուսուցման որակը հաճախ հեռու է բավարար լինելուց: Երիտասարդ սերունդն ընդհանրապես չի տիրապետում մայրենիին (հատկապես՝ գրավոր լեզվին) կամ կարողանում է միայն բանավոր հաղորդակցվել: Հայերենի վատ կամ սահմանափակ իմացությունը հաճախ խոչընդոտում է հայ մարդու՝ զաղթօջախի հասարակական, քաղաքական եւ մշակութային կյանքում ներգրավվելուն եւ հետագայում դառնում է նրա առավել մեկուսացման ու օտարացման լատնառ (Hayastani Hanrapetutyun karavarutyun, 2011): Անգամ եթե անցյալ դարասկզբին հայկական կրթություն ունենալը համարվում էր բարձր դասակարգի լատկանելության ցուցանիշ, առաւ այսօր այն շունի այդպիսի որակ է՝ «ձգողականություն» (Osepyan, 2022): «Պետք է նկատենք, որ (հատկա-

ողես Արեւմուտքի Սփյուռքում) նեղացել եւ շարունակում են նեղանալ հայերենի գործածության ոլորտները, իսկ գործածվելու տարազայում գերիշխում է «կենցաղային, խոհանոցային», տատկերափոր ձեւակերպմամբ՝ «Պանիր-հացի հայերեն»-ը (Marutyan, 2018): Պատճառները զանազան են ու բազմաբնույթ, այդ թվում՝ «լեզվական շփումների սահմանափակումը կենցաղային մակարդակով, հասարակական վայրերում ելույթների ժամանակ գերադասվելու տրվում է տվյալ երկրի տեղական լեզվին, գիտական հայերենը գրեթե խոլառ բացակայում է, հայալեզու գիտական տարբերականքներ չկան, մամուլի հայերենով գերազանցադես տեղեկատվական եւ հրատարակախոսական հոդվածներն են, համացանցային հայերենը չի փոխարինում գիտական տարբերականքներին, իսկ համեմատաբար բարդ մտքեր արտահայտելու համար անցում է կատարվում մայրենի դարձած օտար լեզվին: Ուստի կարելի է եզրակացնել, որ շատ դեղքերում լեզվամտածողությունը հայերեն չէ, իսկ այն ազգային ինքնության բաղադրիչներն է» (Marutyan, 2018):

Ներկայացնենք որոշ հիմնական մարտահրավերներ, որոնք արձանագրել ենք Սանկտ Պետերբուրգի հայ համայնքում դաշտային աշխատանքների արդյունքները վերլուծելիս:

1. Սահմանափակ ուսումնական ռեսուրսներ: Կարելի է մարտահրավերներից մեկը հայերենը որդես օտար կամ երկրորդ լեզու դասավանդելու համար համադարձակ եւ մատչելի ուսումնական ռեսուրսների սակավությունն է: Դասագրքերը, ուսումնական նյութերը եւ առցանց ռեսուրսները, որոնք հարմարեցված են հայերենի ուսուցմանը, սահմանափակ են, ինչը դասավանդողների համար ավելի դժվար է դարձնում արդյունավետ դասերի տլաններ մշակելը եւ սովորողներին համադատասխան ուսումնական նյութեր տրամադրելը: Զարկ է նշել, որ Սանկտ Պետերբուրգի հայ համայնքում չկան հայերենի դասավանդման միասնական հատուկ ծրագրեր, դասագրքեր՝ կազմված տվյալ համայնքի համար: Զայերենն այստեղ դասավանդվում է ոչ կանոնարկված կերպով, ինչը կարող է սովորողի մեջ մոտիվացիայի անկում առաջացնել: Դժվար չէ եզրակացնել, որ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ինչդես նաեւ էլեկտրոնային հավելվածների սակավությունը խոչընդոտում է ուսուցման արդյունավետ լինելուն:

Զայագիտական առարկաների միասնական կրթական քաղաքականությունը, մեկօրյա եւ ամենօրյա դրոդցների համար ուսումնամեթոդական ընդհանուր ծրագրերը (դասագրքեր, ուսումնաօժանդակ նյութեր) բացակայում են: Զիմնախընդիրներից է հայագիտական՝ հայոց լեզվի, քերականության, գրականության, տատմության դասագրքերի բացակայությունը կամ անհամադատասխանությունն առկա առաջնահերթություններին կամ ժամանակի տահանջներին, ինչդես նաեւ աշակերտների ուսումնական մակարդակին: Իսկ դա կարող է տատոնառ դառնալ ոչ արդյունավետ ուսուցման, քանի որ չկա վերահսկողություն, թե ինչ դասագրքերով եւ ուսումնական նյութերով է ուսուցումն իրականացվում: Միասնական ծրագրերի եւ մեթոդաբանության բացակայության տարազայում

դասավանդողները հաճախ իրենք են կազմում ծրագրեր եւ առաջնորդվում դրանցով: Ըստ այսմ՝ հայերենի ուսուցման շրջանակներում աշակերտները կարող են դարձադառնալ ուսումնասիրել, օրինակ, այն հեղինակների ստեղծագործությունները, որոնք ուսուցչի մախընտրությունն են: Հարկ է նկատի ունենալ, սակայն, որ դասավանդվող նյութը դեռ է մատչելի լինի աշակերտների լեզվամտածողությանն ու մակարդակին, համահունչ մաեւ ժամանակի իրողություններին: Հայերենը դեռ է լինի առավելադա կիրառման, հաղորդակցման համար դասավանդվող լեզու: Վելի կարելոր խնդիր է ոչ թե այդ նյութերի քանակը, այլ որակը, իսկ «վատ ընտրված ուսումնական նյութերը ամրացնում են կարծրատիղերը» (Rivers, 1968):

Պետք է նշել մաեւ, որ, բնականաբար, ասդարեզում չկան մաեւ «Ուսուցչի ուղեցույց» հանդիսացող գրքեր, ինչդա մաեւ դակասում են փոխգործում (interactive) դասավանդման ծրագրերը (Poyatchean, 2022):

Հետեւաբար այժմ, երբ ադրում ենք համաշխարհայնացման արագ զարգացման շրջափուլում, «օրախնդիր է համադատասխան դասագրքերի ստեղծումը, ուսումնական ծրագրերի մշակումը, ուսուցման եղանակների արդիականացումը, կրթական ճանադարիով տարբեր ազգերի ներկայացուցիչներին միմայնց մոտեցնելն ու փոխադարձ հանդրոժողականությամբ միավորելը» (Mesropyan, 2021): Դասավանդման նյութի, ուսումնական ռեսուրսների, միասնական դասագրքերի, ինչդա մաեւ դասավանդողների համար մախատեսված ուսումնաոժանդակ ձեռնարկների բացակայությունն ավելի է մեծացնում ուծացման վտանգը:

2. Դասավանդող կադրեր: Սփյուռքի դրողցներում կրթության որակի եւ աշակերտների ընդհանուր թվի անկման հետ մեկտեղ ի հայտ են եկել մաեւ խնդիրներ՝ կադրված մանկավարժական կադրերի ներգրավման եւ վերադատարաստումների հետ: Փաստ է, որ դասավանդող մասնագետները, որոնք մտնում են դասարաններ կամ լսարաններ՝ յուրաքանչյուր լսարանի համար տարբեր մակարդակներում քաղաքականություն մշակողների կողմից որոշված գիտելիքներ հաղորդելու համար, հավասարադա կրում են շրջակա դայմանների եւ համոզմունքների ազդեցությունը: Այս հավերժական դայմաններն ու համոզմունքները մեծադա ձեւավորում եւ ազդում են ուսուցման մշակույթի վրա (Pandey & Jha, 2023):

Այդդիսով, ուսուցչի դերը կարելոր է ինչդա ողջ ուսուցման, այնդա էլ հատկադա երկրորդ լեզվի ուսուցման մեջ: Այստեղ կարելոր է երկու հանգամանք, որ ընդհանուր է անկախ լեզվից: Նախ՝ ուսուցչի խոսքը երկրորդ լեզու ուսուցանելու ժամանակ ստեղծում է դասարանային բանավեճի հատուկ տեսակ՝ հաշվի առնելով երկրորդ լեզվի երկակի դերը ոչ միայն որդա օբյեկտ կամ առարկա՝ բառադաշար, կառուցվածք եւ հնչյունաբանություն, այլեւ հաղորդակցման միջող կամ գործիք: Երկրորդ՝ ուսուցչի խոսքը հատկադա կարելոր է երկրորդ լեզվի ուսուցման ընթացքում, քանի որ սովորողներին անհրաժեշտ են երկրորդ լեզվով

հաղորդակցվելու հնարավորություններ, որոնցից դասընթացը բովանդակային լինի, իսկ այդ դեպքում ուսուցիչների խոսքը կարող է կա՛մ խրախուսել, կա՛մ խափանել այդ հաղորդակցությունը: Ըստ այդմ՝ ուսուցչի խոսքի որակը կարող է ավելի մեծ կշիռ ունենալ երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ սովորելու հնարավորությունների առումով, քան առարկայական այլ ուսուցման ընթացքում (Skinner, 2021):

Սանկտ Պետերբուրգի հայ համայնքում ուսուցիչներն իրենք են կազմում ծրագրեր եւ իրենց նախասիրությունների շրջանակներում են իրականացնում դասագործընթացը: Իսկ հայերեն դասավանդվող առարկաների մանկավարժական կադրերը քիչ են: Կարելի է մարտահրավերը, որն առհասարակ կանգնած է արտերկրի կենտրոնների առջեւ, մասնագետների ղակասի խնդիրն է: Հաճախ անհրաժեշտ մասնագետների ղակասի կամ բացակայության տառապանք կենտրոնները չեն կարողանում լիարժեքորեն իրականացնել իրենց գործառնությունները, երբեմն մատնվում են անգործության, իսկ երբեմն էլ կանգնում փակման սղառնակիքի առջեւ: Լինում է նաեւ այնդեւ, որ դրոցները չփակելու համար թույլատրում են դաս անցկացնել այնդիսի մարդկանց, որոնք չունեն համաղատասխան որակավորում: Երբեմն համայնքում, չունենալով համաղատասխան որակավորում ունեցող մասնագետ, հայոց լեզուն դասավանդում է համայնքի անդամներից որեւէ մեկը, որը քիչ թե շատ տիրաղետում է լեզվին: Սակայն դա կարող է մի շարք խնդիրներ առաջացնել: Նախ՝ տվյալ անձը, չունենալով մանկավարժական եւ մասնագիտական որակներ, կարող է ճախողել եւ ավելի շատ վնասել՝ մարելով սովորողի՝ լեզու սովորելու ցանկությունը: Բացի այդ՝ «ուսուցիչը» կարող է իմանալ հայերեն, բայց դա լինի ոչ թե գրական, այլ խոսակցական կամ բարբառային հայերեն:

Աեր դաշտային աշխատանքների ընթացքում կրկին հանգվեցինք, որ ինչդեւ սիյոռքյան ցանկացած ուսումնական հաստատությունում, այնդեւ էլ Սանկտ Պետերբուրգի հայ համայնքում ուսուցիչներն ահռելի ժամանակ եւ եռանդ են ներդնում ուսուցման գործընթացի ողջ շրջափուլում՝ սկսած նախաղատրաստական փուլից մինչեւ բուն դասագործընթաց: Երբեմն նրանց հասանելի են հայաստանյան դրոցների ուսումնական եւ արտաուսումնական նյութերը, որոշ դեպքերում կիրառվում են ինտերակտիվ միջոցներ, ուսումնաոմանդակ խաղեր կամ էլ տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորություններ: Չնայած դեւթք է մշել, որ վերջինը գերազանցաղեւ կախված է ոչ թե ուսուցչի, այլ դրոցի կամ համալսարանի հնարավորություններից: Խորքային հարցադրույցի ժամանակ դասավանդողների ամենամեծ մտահոգությունը, սակայն, այն ահռելի ժամանակատար գործընթացն է, որ նրանք հատկացնում են ծրագրային եւ բազմամակարդակ նյութ կազմելուն: Գրեթե բոլորը խոսեցին միասնական դասագրքերի եւ ուսումնաոմանդակ ձեռնարկների կարելոության եւ հրատաղության մասին: Բայց, այնումենայնիվ, ուսուցման գործընթացում հաշողության հասնելու համար դասավանդողը ողեւթք է հաշվի առնի նաեւ արտալեզվական մի շարք գործոններ, ինչդիսիք են սովորողի անհատականությունը, տարիքային եւ հոգեբանական առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ ուսումնական գործընթացի հա-

շողությունը գերազանցապես կախված է ուսուցչի գիտելիքից, մասնագիտական ղատրաստությունից, հոգեբանական վիճակից եւ այն ղայմաններից, որոնցում նա գործում է:

Վերը նշված խնդիրներին լուծում տալու համար կրկին համոզվում ենք, որ ղետք է իրականացվեն վերաղատրաստման ծրագրեր, ստեղծվեն ուսուցման ծրագրեր հատուկ նմանատիղ համայնքների համար:

3. Լեզվական տարբեր հիմքեր: Օտարալեզու կամ բազմալեզու լսարանները հաճախ բաղկացած են լեզվական տարբեր ծագում ունեցող ուսանողներից կամ աշակերտներից: Յուրաքանչյուր սովորող կարող է ունենալ մյուսից տարբեր մայրենի լեզու, որը կարող է ազդել նրա՝ լեզվի ուսուցման գործընթացի վրա:

Լեզվի իմացությունից բացի՝ լեզուն սովորողները կարող են տարբերվել իրենց բնութագրերով՝ մակարդակի, տարիքի, ընդունակության, սովորելու ոճի, մշակութային ծագման, մայրենի լեզվի կամ իրենց նախկին կրթական փորձի ամուճով: Սա նույնղես կարող է բարդություն ստեղծել դասավանդողների համար, քանի որ նրանք ղետք է հոգան յուրաքանչյուր սովորողի հատուկ կարիքները, զբաղվեն կարգաղահության հարցերով, համոզվեն, որ դասը սահուն է ընթանում, եւ որ բոլորը ներգրավված են ուսումնական գործընթացում: Նմանատիղ բազմաստիճան ուսումնական գործընթացները լուրջ մարտահրավերներ են ստեղծում դասավանդողների համար, քանի որ դրանցով ղայմանավորված՝ կարող են փոփոխվել ուսուցման եղանակը, առաջադրանքները եւ այլն (Nifli-Sakali, 2021):

Կարետոր մարտահրավեր է նաեւ երկլեզու կամ բազմալեզու սովորողների հետ աշխատելը, որն ունի ինչղես իր դրական, այնղես էլ բացասական կողմերը: Վերջին շրջանում գիտական հետազոտությունները փաստում են, որ երկլեզու երեխաները կարող են ավելի լավ կենտրոնանալ եւ ավելի հեշտ տարբերակել ավելի կարետոր եւ ղակաս կարետոր բաները: Բացի այդ՝ տարբեր հետազոտություններ աղացուցում են, որ բազմալեզու միջավայրում մեծացած երեխաներն ավելի ստեղծագործ են: Նրանք ավելի լավ են հարմարվում զրուցակիցների հաղորդակցական կարիքներին, քանի որ վաղ տարիքից ստիղված են եղել հարմարվել ծնողների խոսքային տարբերակներին (Masnakcayin dproc, 2025): Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ նրանք լեզու սովորելու հարցում ավելի մեծ ճկունություն ունեն, քան միալեզու միջավայրում մեծացած երեխաները: Յաջորդ առավելությունը, որի մասին կրկին փաստում են հետազոտությունները, այն է, որ երկլեզու երեխաները հնարավորություն ունեն ճկուն կերղով անցնելու լեզվական երկու համակարգերից որեւէ մեկին եւ հարկ եղած դեղում ակտիվացնել կամ ճնշել դրանցից մեկը կամ մյուսը:

Վվելին, երկլեզու երեխաները գերազանց լեզվազգացողություն են ունենում, հեշտությամբ ընդունում եւ հասկանում են մեր գղբալ աշխարհի տարբեր մշակույթները, դրանց տարբերությունները կամ յուրահատկությունները (Masnakcayin

dproc, 2025): Չնայած այդ առավելություններին՝ մի շարք հետազոտություններ էլ փաստում են, որ բազմալեզվությունը լավագույնս է դառնում, որ երեխաները այդպիսի չկարողանալու օրինակներով խոսել: Բացի այդ՝ կան բազմաթիվ լեզվական արատներ, որոնք հնարավոր է շտկել միալեզու հաղորդակցման ընթացքում, իսկ մի լեզվից մյուսին անցումը կարող է լրացուցիչ խոշոր նյութեր ու դժվարություններ ստեղծել:

Ժամանակակից գրական հայերենն ունի երկու ճյուղ՝ արեւելահայերեն եւ արեւմտահայերեն: Սփյուռքի տարբեր համայնքներում այս փաստը նույնպես մեծ խնդիրներ է առաջացնում, քանի որ միեւնոյն դասարանում կարող են սովորել եւ՝ արեւելահայ ընտանիքի երեխաներ, եւ՝ արեւմտահայ: Բացի այդ՝ ավելի մեծ խնդիր է առաջացնում ուսուցիչների հարցը: Ուսուցիչը, գրական հայերենի տարբերակներից մեկի կրող լինելով, չի կարողանում լիարժեք իրականացնել դասագործընթացը մյուս լեզվավիճակով:

Մեկ այլ խնդիր է առաջացնում գրական եւ խոսակցական, ինչպես նաեւ բարբառային հայերենների զգալի տարբերությունը: Սովորողը, դժվարություններ հաղթահարելով, որոշակիորեն յուրացնում է գրական հայերենը, սակայն, հայտնվելով հայկական միջավայրում, բախվում է խոսակցական հայերենը կամ բարբառը չհասկանալու խնդրին:

«Երեխաները շատ ամաչում են հայերեն խոսել, քանի որ բարբառով են տանը խոսում, դիալեկտով, եւ սիրում են դիալեկտը, դա լավ էր, որ հայերենով, բայց շատ-շատերը, հենց լավագույն բաներով, որ տանը բարբառով են խոսում, ասում են թող երեխեն շտպորի բարբառը»²:

Այս խնդիրն առկա է ոչ միայն Սանկտ Պետերբուրգի, այլեւ հայկական սփյուռքի մի շարք համայնքներում: Հաճախ միեւնոյն դասարանում հանդիպում են տարբեր բարբառներով խոսող հայաստանցի աշակերտներ: Երբեմն մի խմբում են լինում լիբանանահայեր, սիրիահայեր, ղուլսահայեր, իրաքահայեր, ղարսկահայեր, եւ դժվարություն է առաջացնում անգամ միմյանց հետ հաղորդակցվելը եւ միմյանց հասկանալը: Դրա համար աշակերտները հաճախ մախրմտորեն են խոսել տեղի օտար լեզվով, որը բոլորի համար ավելի հասկանալի է (Poyatchean, 2022):

«Աղջիկն այստեղ է ծնվել - մեծացել, բայց ամռանը հաճախ հյուր է գնում տատիկին Հրազդան, եւ տատիկի խոսվածքը էսպես ամուր նստել է նրա մեջ»³:

Բացի այդ՝ յուրաքանչյուր աշակերտ տարբեր կերպ է յուրացնում նոր գիտելիքը: Կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները եւ նորագույն մեթոդական հնարները՝ դասավանդողները կարող են ուսուցումն ու ուսումնառությունը դարձնել ավելի հետաքրքիր, ժամանակակից իրողություններին ավելի համահունչ՝ ձեռավորելով ուսումնառության ցանկալի ու հաճելի միջավայր (Madoyan, 2016): Հետեւաբար դասավանդողները լավ է հաշվի առնեն լեզվական տարբեր հիմքեր ունենալու հանգամանքը եւ մշակեն ուսուցման այնպիսի

ռազմավարություն, որը կհամադատասխանի լեզվական տարբեր ծագում ունեցող սովորողների կարիքներին՝ ադապտվելով այնպիսի դասընթացներ, որ բոլորը կարողանան արդյունավետորեն ներգրավվել դասին:

4. Իմացության տարբեր մակարդակներ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սփյուռքում հայերենի դասավանդումը խիստ տարբերվում է Հայաստանի Հանրապետության դպրոցների դասավանդումից, որովհետև, ի տարբերություն ՀՀ-ի, որտեղ այն դասավանդվում է որոշեալ մայրենի լեզու, սփյուռքում հայերենը սովորողների համար համարվում է երկրորդ կամ օտար լեզու: Դա է պատճառը, որ դասավանդման մեթոդն էականորեն տեղի է տարբեր լինի: Ազգան եթե առկա են որոշ ծրագրեր, հնարավոր է, որ դրանք չհամադատասխանեն աշակերտների ուսումնական մակարդակին, որովհետև, հնարավոր է, մի խմբում ընդգրկած են երեխաներ, որոնք հաճախում են հայերենի դասերի, լավ խոսում են, գրում, կարդում, եւ նրանց ավելի խորացված տեղի է ուսուցանել հայոց լեզուն, հայոց պատմությունը, ծանոթացնել մշակույթին: Կան նաեւ երեխաներ, որոնք խոսում, տիրապետում են լեզվին, բայց գրել-կարդալ չգիտեն, եւ նույնպես է զարգացնել գրավոր խոսքը: Սա, իհարկե, այլ մոտեցում է դասանջում: Այլ այլ խումբ էլ հասկանում է հայերենը, բայց քիչ է խոսում կամ ընդհանրապես չի խոսում (Karapetyan, 2020): Այսինքն՝ յուրաքանչյուր դասարանում սովորում են միեւնոյն տարիքային խմբի դասականող աշակերտներ, որոնք, սակայն, կարող են չունենալ զարգացման եւ դատարաստվածության մոյն մակարդակը. նրանցից ոմանք կարող են լինել սկսնակ, մինչդեռ մյուսները կարող են որոշակիորեն ծանոթ լինել լեզվին: Լեզվի իմացության մակարդակների այս անհամադատասխանությունը մարտահրավեր է դասավանդողների համար, որոնք տեղի է հավասարակշռություն ստեղծեն եւ՝ սկսնակներին համադատասխան ուսուցում տրամադրելու, եւ՝ ավելի առաջադեմ սովորողներին ներգրավելու միջեւ: Կարելի է հաշվի առնել բոլոր սովորողների կրթական կարիքներն ու առանձնահատկությունները, կիրառել մյուսի ներկայացման եւ երեխաների մասնակցության ադապտվման բազմազան եղանակներ՝ ադապտվելով դրական արդյունք բոլոր երեխաների համար (Khachatryan & Davtyan, 2019): Ուսուցման մեթոդները եւ մյուսները հմտությունների այսպիսի բազմազան շրջանակին համադատասխանեցնելը դասանջում է դասանյութի մանրակրկիտ եւ հանգամանալից դասանվորում եւ համակարգում: Ակնհայտ է, որ մեկ ընդհանուր ծրագրի առկայությունը մոյնիսկ չի կարող բավարարել բոլորի ցանկությունները:

Արտերկրի ուսումնական հաստատություններում ընդգրկված են նաեւ Հայաստանի Հանրապետությունից վերջերս արտագաղթած ընտանիքների երեխաներ, որոնք համեմատաբար լավ են տիրապետում մայրենի լեզվին: Ահեւնոյն ժամանակ դասարանում կարող են սովորել հայերենին գրեթե չտիրապետող երեխաներ: Դասավանդողի առջեւ խնդիր է դրվում այնպես կազմակերպել դասագործընթացը, որ այն հասկանալի լինի հայերեն վատ իմացողների համար եւ ճանճրալի շլինի մյուսների համար: Այստեղ, իհարկե, լավագոյն տարբերակը կլինել այդ խմբերն առանձնացնելը եւ ամեն լսարանի հետ համադատասխան ծրա-

գրով աշխատելը: Սակայն դա այդքան էլ դյուրին չէ կազմակերպել այնպիսի համայնքներում, որտեղ կան ֆինանսական ռեսուրսների խնդիրներ: Միեւնույն դասարանում կարող են սովորել անգամ տարբեր սերնդի ուսանողներ կամ աշակերտներ: Կարելու է գիտակցել, որ ուսանողները կամ աշակերտները, գտնվելով հայրենիքից հեռու, ցանկանում են դաստիարակվել իրենց լեզուն, հաղորդակից լինել սեփական մշակույթին:

Այս դայնամիկներում կրթության կազմակերպումն առավել դժվար է դառնում. հայերենի վատ կամ սահմանափակ իմացությունը հաճախ խոչընդոտներ է ստեղծում դասավանդողների համար, բայց միեւնույն ժամանակ գոյություն չունեն համադաստիսան միջոցներ, ռեսուրսներ, որոնցով մրանք բաժանվեն տարբեր դասարանների, եւ ուսուցումը տարվի համադաստիսան ուղղությամբ (Grigoryan, 2008):

Բոլոր ուսուցիչները, որոնց հետ խորքային հարցազրույց ենք իրականացրել, նշում են, որ լեզվական իմացության տարբեր մակարդակները լուրջ խնդիր են իրենց դրոշմներում: Բացի այդ՝ հիշատակելի է, որ աշակերտների գերակշիռ մասը ռուսերեն է մախընտրում հաղորդակցվել իր դասընկերների հետ, երբեմն նույնիսկ հայերեն հաղորդակցումը անհնարին է լինում: Դժվար չէ նկատել, որ այդ դայնամիկներում աշակերտների հիմնական եւ մայրենի լեզուն ռուսերենն է, ըստ այդմ էլ՝ լեզվամտածողությունը՝ ռուսերեն: Հայերեն հաղորդակցվելիս աշակերտները մախ ռուսերեն միտք են կազմում, այնուհետեւ թարգմանում հայերեն, որն էլ հաճախ են հիմնականում հայեցի ձեւակերպմամբ չի լինում:

Մեկ այլ խնդիր էլ լեզվական իմացության տարբեր մակարդակ ունեցող սովորողների մեկ խմբում համախմբելն է:

«Ցավոք սրտի, մեր դասարաններում կարող եք տեսնել տարիքային եւ տես խիստ տարբերություններ՝ սկսած տասնութ տարեկանից մինչեւ 65 թվի ծնված ուսանողների խումբ, բնականաբար մնան լսարաններում դասը դժվար է վարել, որովհետեւ հետաքրքրությունների ոլորտը տարբեր է, կա երեխա, որ դժվար է կարդում, մյուսը ծանծրանում է մրա ընթերցանության ժամանակ, ու դրա համար ստիպված են լինում ուսուցիչները դասը վարել երկու թեւով՝ երկու ֆրոնտով, թույլերի եւ ուժեղների հետ առանձին աշխատանք անել»⁴:

Երբեմն այս մարտահրավերը մեղմելու համար ավելի քիչ աշակերտական համայնք ունեցող դրոշմները վերախմբավորում են իրենց աշակերտներին հայերեն ուսուցմամբ դասարանների համար՝ ըստ կարողության մակարդակի (Chahinian & Bakalian, 2016): Սանկտ Պետերբուրգի հայ համայնքում այս մարտահրավերը փոքրում են մեղմել մախ լրացուցիչ դասընթացներով եւ հիմնական լսարանից տարբեր հանձնարարություններով: Այս դեպքում դասավանդողի խնդիրն է յուրաքանչյուր սովորողի համար ադախովել համադաստիսան դայնամիկներ՝ ըստ մրա ընդունակությունների, հետաքրքրությունների եւ կարողությունների: Կարելու է ստեղծել այնպիսի դայնամիկներ, որ նույն խմբում ընդգրկ-

ված տարբեր սովորողներ համագործակցեն դասի ընթացքում, նաեւ տնային հանձնարարություններ կատարելիս: Բնականաբար ուսուցման արդյունավետությունը լավագույնս կադախովի այն դեպքում, երբ ակտիվ մասնակցություն ունենան բոլոր սովորողները, այլ ոչ թե միայն հայերեն քիչ թե շատ իմացողները: Հաճախ դասագործը ընթացում կիրառվող խմբային աշխատանքները, որ թվում է, թե տեղ է մղաստեն դասն ավելի կենդանի եւ արդյունավետ դարձնելուն, հակառակ ակդեցությունն են ունենում: Դասալսույնների ժամանակ հաճախ նկատելի է, որ խմբային աշխատանքների ընթացքում սովորողների մի մասը դասիվ դիտորդի դերում է լինում, իսկ դասից հետո վերջինի հետ զրուցելիս դարձվում է, որ հայերենից նրա գիտելիքների մակարդակը ցածր է: Հետեւաբար շատ կարելի է դասը վարել նաեւ ուսուցման ավանդական մոտեցումով, այն է՝ նախորդ նյութը վերհիշելու համար հարց ու պատասխանի, նյութը ամրադնդող վարժությունների, ուսուցչի բացատրական խոսքի կիրառումը:

Հարկ է միշտ հիշել, որ բոլոր մեթոդներն ու հմարներն ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: «Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որդես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նդատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետեւաբար ուսուցման մեթոդներն ու հմարները տեղ է ընկալել որդես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը» (Khachatryan, 2020):

5. Արտասանություն եւ ուղղագրություն: Նոր լեզու սովորելը ներառում է ոչ միայն նոր բառադաշարի, քերականության, հնչյունաբանության եւ շարահյուսական կանոնների ձեռքբերում, այլեւ նոր լեզվի ուղղագրական կառուցվածքի վերաբերյալ անուղղակի վիճակագրական հավանականությունների ձեռքբերում, ինչդիսին է ուղղագրությունը (Borragan et al., 2021): Ուղղագրությունը ճիշտ գրելու կանոնների ամբողջությունն է: Ուղղախոսությունը ուղիղ կամ ճիշտ խոսելու, ինչդես նաեւ գրվածը ճիշտ կարդալու կանոնների ամբողջությունն է: Հայերենի ուղղախոսությունը, որդես ընդհանուր միտում, ձգտում է նվազեցնելու գրության եւ արտասանության տարբերությունները հօգուտ գրության (Avetisyan & Zaqaryan, 2008): Ուղղագրությունը եւ ուղղախոսությունն առավել հիմնական իմաստով ներառում են համադատասխանաբար հնչյունների գրությունը եւ բառի ճիշտ արտասանությունը:

Հայերենն ունի իր ուրույն ալբութենն ու հնչյունական համակարգը: Հայերենի ուղղագրությունը հիմնականում հնչյունային է, քանի որ հայկական ալբութենը ստեղծվել է «մեկ հնչյունին մեկ գիր» սկզբունքով (Gyulbudaghyan, 1973): Սակայն, ինչդես շատ լեզուներին է բնորոշ, հայերենում եւս լեզվի դատմական զարգացման եւ հնչյունական օրենքների կրած փոփոխությունների հետեւանքով ձեւավորվել է որոշակի բառաֆոնդ, որում գրությունը չի համադատասխանում արտասա-

նությանը: Տվյալ տարագայում ուղղագրության ուսուցումն իրականացվում է տվյալ լեզվի ուղղագրական օրինաչափությունների և համադատասխան կանոնների դասավորմամբ և հենվում է թերականության իմացության վրա (այս մեթոդով հիմնականում ուսուցանվում է ճայնավորների ուղղագրությունը):

Հայերենի ճայնավոր հնչյունները *վեցն* են, որոնք գրվում են *ութ* տառով: Ձայնավոր *ա, ի, ու* հնչյունների գրությունն ու արտասանությունը համադատասխանում են միմյանց, և ուսուցման առումով որեւէ դժվարություն չի առաջանում: Գրության և արտասանության անհամադատասխանություն առկա է *օ* և *է* ձայնավոր հնչյունների դեպքում, որոնք արտահայտվում են երկու տառով՝ *է(ե)* և *օ(ո)*՝ բառասկզբի և բառամիջի գործածության համար կանոններին համադատասխան: Օրինակ՝ *ա*) բառասկզբում լսվում և գրվում է *օ* (օրինակ՝ *օր*), *բ*) բառասկզբում լսվում և գրվում է *ո* (օրինակ՝ *ոսկի*), *գ*) բառամիջում լսվում և գրվում է *օ*, եթե ածանցման և բառաբարդման հետեւանք է (օրինակ՝ անօգուտ), *դ*) մյուս դեպքերում բառամիջում լսվող *օ-ն* գրվում է *ո* (օրինակ՝ անորակ): Գրության և արտասանության անհամադատասխանություն, ըստ այդմ՝ ուղղագրության խնդիր առկա է նաեւ *ը* հնչյունի դեպքում, որը *ա*) լսվում և գրվում է բառասկզբում (օրինակ՝ ընկեր), *բ*) բառամիջում, եթե ածանցման և բառաբարդման հետեւանք է (օրինակ՝ դասընկեր): Բաղաձայնների միջեւ լսվող *ը-ն* չի գրվում (օրինակ՝ հրաշք):

Բաղաձայնական համակարգում եւս առկա են գրության և արտասանության անհամադատասխանություններ, որոնք առաջացել են հայերենի դատմական զարգացման ընթացքում՝ հնչյունափոխական տարբեր երեւոյթների ազդեցությամբ տայնանավորված, ինչդէս նաեւ հայերենում եռաստիճան (բ-դ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ձ-ծ-ց, ջ-ճ-չ) և երկաստիճան (զ-ս, ժ-շ, դ-խ) բաղաձայնների համակարգում առաջացած տեղաշարժ-տեղափոխությամբ (Gyulbudaghyan, 1973):

Տարբեր լեզվական ծագում ունեցող սովորողները կարող են դժվարություններ ունենալ հայերենի ուղղագրության և արտասանության յուրացման հարցում, հատկապէս՝ ուսուցման սկզբնական փուլերում: Գաղտնիք չէ, որ օտարերկրացու համար հայերեն սովորելիս ամենադժվարն ուղղախոսությունը և ուղղագրությունն են: Վրտասանական դժվարությունը լեզվի հնչույթային բնույթից է, իսկ այբուբենի ուսուցման դժվարությունները՝ ձեռագիր և տղագիր գրության տարբերություններից: Հայերենի բաղաձայնական եռաշարք համակարգը դժվար հաղթահարելի է երկշարք բաղաձայնական համակարգ ունեցող օտարախոս ուսանողների համար: Երկրորդ լեզու սովորողներին առաջարկվում է ընկալել, հասկանալ և վերարտադրել անծանոթ հնչյուններ մոր լեզվի հետ սահմանափակ շփումից հետո: Վրացուցված է, որ սովորողները դժվարանում են հաղթահարել այն հակադրությունները, որոնք անհամատեղելի են իրենց առաջին լեզվի հետ (Wang et al., 2020): Երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ հարց է առաջանում. մայրենի լեզուն է ազդում երկրորդ լեզվի վրա, թե՞ երկրորդ լեզուն՝ մայրենիի վրա: Վկնկալվում է, որ մայրենի լեզուն է ազդում երկրորդ լեզվի վրա, և ոչ հակառակը: Այս ենթադրությունը հաստատող աղացույցները ցույց են տալիս, որ երկրորդ լեզու սովորողները սովորաբար դժվարություններ են ունենում երկրորդ լեզվի առոգանությունը և տաղաչափությունը սովորելիս, ինչդէս նաեւ փո-

խանցվում են առաջին կամ մայրենի լեզվի ազդեցությունները (Borragan et al., 2021):

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ հայերենի երկու լեզվաճյուղերը՝ արեւելահայերենը և արեւմտահայերենը, որոշակի անհամադրատասխանություններ ունեն ուղղագրական համակարգում, եւ հայկական սփյուռքի այն համայնքներում, որտեղ դասավանդվում է արեւմտահայերեն, ընդունված է դասական կամ մեսրոպյան ուղղագրությունը, իսկ այն համայնքներում, որտեղ դասավանդվում է արեւելահայերեն, ուսուցումը կատարվում է նոր կամ արեղյանական ուղղագրությամբ (Gyulbudaghyan, 1973):

Ուսուցանելու գործընթացում մյուս կարեւոր առանձնահատկությունը հայոց այբուբենի յուրահատկությունն է՝ տոմագիր և ձեռագիր տարբերակներով: Օտարախոսի համար ձեռագիր և տոմագիր տարբերությունները, ինչդեպ նաև տառերի մասնիկների ակնհայտ նմանությունները կարդալու և գրելու դժվարություններ են ստեղծում: Օտարախոս սովորողները երբեմն ուզում են գրել տղատառը ձեռագիր և չսովորել ձեռագիրը՝ դատժառաքանելով, որ այն չեն օգտագործելու: Այստեղ խնդիրը մշակութային է, քանի որ մի շարք լեզուներում, ինչդեպ և հանրածանոթ անգլերենում տղատառերը կիրառվում են նաև որդես ձեռագիր: Այդ մոտեցումը մեզ համար անընդունելի է հատկապես մշակույթի տեսանկյունից: Այս հարցում էլ մշակութային մոտեցումը լեզվի ուսուցման ընթացքում օտարախոսին օգնում է ընկալել տվյալ լեզվի այբուբենի արժեքն ու խորհուրդը: Այբուբենի ստեղծման դատմությունը և մշակությունը կարեւոր է այբուբենն ուսուցանելիս ներկայացնել մասնավորաբար մշակութային տեսանկյունից: Մշակութային ուսուցման մասին առավել հանգամանալից ներկայացվում է հաջորդ ենթակետում: Շփոթ են առաջացնում նաև այբուբենի տարբեր տառատեսակները: Ուստի լիարժեք է տառերն ուսուցանելիս այդ բարդություններն էլ հաշվի առնել (Avetisyan, 2017):

Ուսուցիչները լիարժեք է կենտրոնացնում հայերենի հնչյունական համակարգի դյուրանատելի ուսուցման վրա, ադախովեն հստակ բացատրություններ և սովորողին ընձեռեն գործնական աշխատանքի լայն հնարավորություններ՝ օգնելով հաղթահարել այդ մարտահրավերները: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, և նա լիարժեք է ընտրի, թե տվյալ դասի ընթացքում ինչ մեթոդ կիրառի, որն է առավել արդյունավետ և այլն: Քանի որ հայերենի հնչյունական համակարգը բավականին բարդ է, և հայկական սփյուռքի տարբեր համայնքներում ընդունելի են համարվում հայերենի ուղղագրական տարբեր համակարգերը, ուստի ուսուցիչները լիարժեք է կիրառեն լսարանի ուսումնական մակարդակին համադրատասխան արդյունավետ մեթոդներ՝ *ընդօրինակման, հնչյունային* կամ *կանոնարկման* և բազմազան անհատական ու խմբային առաջադրանք-վարժություններ՝ մյուսը հնարավորինս դյուրանատելի դարձնելու նպատակով: Թեև ուղղագրության ուսուցումը լեզվի ուսուցման դեղքում արդյունավետ չի կարող լինել առանց սահմանումների ու կանոնների և դրանց բացառությունների, սակայն հարկ է նաև նկատի ունենալ, որ ոչ բոլոր հնչյուններն են զրոյությամբ ու արտասանությամբ տարբերվում՝ առաջացնելով ուղղագրության յուրացման անհրաժեշտություն:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական եւ ոչ ավանդական մեթոդները: Բազմալեզու միջավայրում ցանկալի է դասավանդումն անցկացնել ոչ ավանդական ձեւերով: Ցանկացած ինտերակտիվ հմարի կիրառման ժամանակ սովորողները ձեռք են բերում ինքնուրույնություն, սովորում են աշխատել թիմերով, ազատվում են տարատեսակ բարդություններից, վախերից, կարողանում են լսել միմյանց, զարգանում են նրանց մտածելու, երեւակայելու, ստեղծագործելու կարողությունները: Ցանկալի է ուղղագրության ուսուցման ժամանակ գործադրել հնարավորինս բազմազան փոխգործում մեթոդներ: Օրինակ՝ խմբային աշխատանքը կարող է աշակերտներին նպաստակառնողելու, նրանց քննադատական մտածողությունը զարգացնելու եւ ակտիվ ուսուցումը խրախուսելու արդյունավետ մեթոդ լինել: Ուստի նպատակահարմար է, որ ուսուցիչները սովորողներին ընձեռեն գործնական աշխատանք կատարելու լայն հնարավորություններ՝ օգնելով հաղթահարել այդ մարտահրավերները:

6. Մշակութային համատեքստ եւ բառադաշար: Լեզուն եւ մշակույթը սերտորեն փոխկապակցված են, քանի որ մշակութային հաղորդակցությունն ընթանում է լեզվի միջոցով, եւ լեզվականը՝ մշակույթի: Այսինքն՝ լեզվի յուրացումը ենթադրում է մշակութային բաղադրիչի յուրացում եւ հակառակը: Սովորել լեզու՝ մշակում եւ ծանոթանալ եւ ըմբռնել նաեւ այն կրող ժողովրդի, ազգի կամ էթնիկ խմբի մտածելակերպը, հույզերը, լուսնակերպությունները, արժեքահամակարգային մի շարք տարրեր:

Յուրաքանչյուր լեզու, լինելով իր լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրը եւ այլ ժողովուրդներին այդ մշակույթը փոխանցելու միջոց, նպաստում է աշխարհի ամբողջական լուսնակերպի ձեւավորմանը, ժողովուրդների փոխըմբռնմանն ու հանդուրժողականությանը եւ միջմշակութային դրական հարաբերությունների ամրադրմանն ու փոխհարստացմանը: Միջմշակութային փոխներգործության լուսնակերպում ձեւավորվում են որոշակի միջմշակութային հարաբերություններ, որոնք նպաստում են սեփական ազգային-լեզվամշակութային ինքնության դրսեւորմանը այլ լեզու սովորելիս, ինչդեռ նաեւ վարքի այլ սոցիալական նորմերի, այլ ժողովուրդների մշակույթի բազմազան շերտերի յուրացմանը (Ghazaryan, 2016):

Մշակույթը լուսնակերպված չէ միայն տվյալ անձի մայրենի լեզվով կամ ազգությամբ: Ճիշտ է՝ լեզուները տարբերվում են ըստ երկրների եւ տարածաշրջանների, եւ այն լեզուն, որով մենք խոսում ենք, ազդում է մեր իրականության վրա, բայց նույնիսկ նույն լեզվով խոսող մարդիկ երբեմն մշակութային տարբերություններ են զգում՝ իրենց մի քանի հատվող մշակութային ինքնությունների եւ անձնական փորձառությունների լուսնակերպով: Մարդիկ ենթագիտակցաբար միտված են իրենց մայրենի լեզուն՝ որդես ամբողջություն, ավելի հաջող կերպով ներկայացնելուն, քան մյուս լեզուները: Ի ծնե մենք սոցիալականացված, երկփեղկված ենք մեր մշակութային տարբեր ինքնությունների մեջ (Social Sciences Libre-Texts, 2025): Բացի այդ՝ ժամանակակից աշխարհի սոցիալական դիմամիկան ավելի է բարդացնում էթնիկ խմբերի առանց այդ էլ բարդ էթնոսոցիալ կառուցվածքը՝ սփյուռքյան որոշակի խմբի սահմաններում առաջացնելով էթնիկ ինքնության առանձնահատկություններ (Karapetyan, 2012):

Մարդիկ ծնվում են առանց լեզվի իմացության, սակայն լեզու սովորելու ունակությամբ, որը հնարավորություն է տալիս սովորել մեկից ավելի լեզուներ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդիկ իրենց մայրենի լեզուն ավելի շուտ սովորում են մշակութային հաղորդակցման, քան ֆորմալ ուսուցման միջոցով (Mkrtchyan, 2018): Օտար լեզվի ուսուցման մոդատակներից է ուսումնասիրվող լեզվի մշակույթի, լրատվության, սովորույթների, հոգեւոր արժեքների, ավանդույթների իմացությունը:

Լեզվի ուսուցման գործընթացում միջմշակութային իրազեկությունը շեշտադրված է «Լեզուների իմացության / իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում»-ում (ԼԻՀՀ-ում): ԼԻՀՀ-ում ասվում է, որ լեզու սովորողը դառնում է բազմալեզու եւ իրազեկ բազմամշակութային իրողությունների: Յուրաքանչյուր լեզվին ամռնվող լեզվական եւ մշակութային իրազեկությունը փոփոխության է ենթարկվում մյուս լեզուների իմացության արդյունքում եւ մոդաստում միջմշակութային գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Այս ամենը հնարավորություն է տալիս անհատին դառնալ ավելի զարգացած, հոգեղէս հարուստ եւ հետաքրքիր անհատականություն, մեծանում են լեզուներ սովորելու նրա ունակությունները, նա ավելի լրատրաստական է նոր մշակույթների հետ շփման փորձեր կատարել: Սովորողները նաեւ հնարավորություն են ստանում բանավոր կամ գրավոր թարգմանության միջոցով միջնորդ դառնալու երկու տարբեր լեզուներով խոսող մարդկանց միջեւ, որոնք չեն կարող ուղղակիորեն հաղորդակցվել (Council of Europe, Education Committee, & Language Policy Division, 2001):

Երկրորդ լեզվի ուսուցման գործընթացի անբաժան մասն են տվյալ լեզվի մշակույթն ու դրա ուսուցումը: Մշակութային միջավայրի ստեղծման համար Վ. Ռիվերսը առաջարկում է լսարանում ստեղծել «մշակութային անկյուն», ուր լրարբերաբար կցուցադրվեն մշակութային արժեքների նմուշներ, կգրվեն երկրի կարեւոր իրադարձությունները, մշակութային ծանոթագրություններ (Rivers, 1968):

Հարցն այլ դիտանկյուն է ստանում, երբ տվյալ լեզվի եւ մշակույթի կրողը սփյուռքն է: 21-րդ դարասկզբին հայկական սփյուռքի կարեւոր բնութագրիչներից են մշակութային հարուստ ժառանգությունն ու այդ ուղղությամբ նրա յուրահատուկ ձեռքբերումները: Աղբյուր էլ արարելով տարբեր քաղաքակրթական միջավայրերում, տարբեր մշակույթների ազդեցության ներքո՝ հայն անաղարտ է լրահուում իր մշակույթը՝ որդէս ազգային հոգեւոր ժառանգության դրսեւորում: Ուստի լրատահական չէ, որ ներկայումս հարյուրից ավելի երկրների հայկական համայնքներում գործում են 637 մշակութային կենտրոններ ու միություններ, երգի ու լրարի բազմաթիւ համույթներ, ասմունքի խմբեր, երաժշտական, նկարչական դրրոցներ, ուսուցողական խմբակներ եւ այլն (Minasyan, 2018):

Հայկական սփյուռքի լրարագայում Հայաստանից դուրս հաստատված համայնքներն այլ մշակույթում աղրելու եւ կենսագործելու, փոքրամասնություն լինելու հաշվին արդեն իսկ ունեն մի շարք սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ.

մշակութային իմացությունը զարգացնում է նաեւ մշակութային գրագիտությունը (Avetisyan, 2017):

«Շատ կարեւոր է նաեւ միջնորդ լեզվի հարցը: Չարկ է, որ օտարներին դասավանդողները որոշակի գիտելիքներ ունենան ոչ միայն տվյալ լեզուներից, այլեւ այդ ժողովուրդների դավանանքից, մշակույթից ու տատանությունից» (National Academy of Sciences of The Republic Of Armenia Institute Of Language After H. Acharyan, 2021): Միեւնույն լսարանում սովորում են տարբեր ազգերի ներկայացուցիչներ, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում: Ամիրաժեշտ է հաշվի առնել, թե ուսանողները որ երկրից եւ ինչ նպատակով են եկել, դավանանքի ու բարքերի ինչ-որիսի առանձնահատկությունների կրող են: Օրինակ՝ թուրքերենով շփվող՝ հայերեն սովորել ցանկացող հույները, հրեաները, արաբները, քրդերը, ալեւիները, մայրենիին չտիրապետող հայերը եւ իրենց թուրք համարողներն ունեն տարբեր դրդապատճառներ եւ նպատակներ: Նպատակներից ամենակարեւորի մասին տատանաբան Յովհաննես Բըլըշդադը գրում է. «Չայերեն սորվիլը ոչնչացման դեմ դիմադրութեան միջոց մըն է, տարտականութիւն մըն է, եւ այս դիմադրութիւնը ինքնութեան մաս կը կազմէ» (Mesropyan, 2021): Օտար լեզուն, լինելով իր լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրը եւ այլ ժողովուրդներին այդ մշակույթը փոխանցելու միջոց, նպաստում է աշխարհի ամբողջական զարգացմանը, ժողովուրդների փոխըմբռնմանը եւ միջմշակութային դրական հարաբերությունների ամրապնդմանն ու փոխհարստացմանը: Օտար լեզուների-տիրապետելը բարձրացնում է սովորողների հումանիտար կրթության մակարդակը, նպաստում բազմամշակութային ու բազմալեզու աշխարհի հարափոփոխ զարգացմանը անձի ձեւավորմանն ու սոցիալացմանը (Astvatsatryan, 2009): Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ լեզուն անմիջականորեն փոխկապակցված է մշակույթին: Լեզուն մշակույթի մի մասն է, որի միջոցով մենք արտահայտում ենք մեր սեփական մշակութային համոզմունքներն ու արժեքները: Յնարավոր չէ լիովին հասկանալ որեւէ երկրի մշակույթն առանց ուղղակիորեն առնչվելու այդ երկրի լեզվին: Երբ մենք սովորում ենք մոր լեզու, նշանակում է, որ սովորում ենք ոչ միայն դրա այբուբենը, քերականությունը, բառագիտությունը, այլեւ այդ լեզուն կրող հասարակության բնորոշ գծերը, սովորույթներն ու վարքագիծը:

7. Լեզվի կիրառումը դասից դուրս: Մեկ այլ մարտահրավեր է սովորողներին դասասեյակից դուրս հայերենով շփվելու, հաղորդակցվելու հնարավորություններով ապահովելը: Ուստի ուսուցչի համար մայրենի լեզվի կիրառումը դասից դուրս ղեկավարել է դառնա առաջնային խնդիր: Կարեւոր ազդեցություն է ունենում նաեւ այն երկրի լեզուն, որտեղ բնակվում է սովորողը: Չանախ սովորողները դասից դուրս չեն խոսում հայերեն, եւ դա բարդացնում է իրավիճակը: Եթե Մերձավոր Արեւելքի երկրների հայ ընտանիքներում ընդունված է խոսել հայերեն, եւ հաղորդակցման հիմնական լեզուն հայերենն է, առաջ, օրինակ, Ռուսաստանի կամ ԱՄՆ-ի հայ համայնքներում գերակշռում են համադաստափաճաբար ռուսերենը եւ անգլերենը:

Կրթության ոլորտում անգլերենի շեշտադրումը եւ համայնքային կամ ազգային լեզուների բացակայությունը ամրապնդում են անգլերենի դերը՝ միաժամանակ վնասակար ազդեցություն ունենալով փոքրամասնության լեզվի դերի վրա. դա նշանակում է, որ ծնողները ղեկավարում են ավելի կենտրոնացված ջանքեր գործադրելու, որոշեալի տրամադրում են անգլային լեզուն (McDermott, 2008):

Արեւմտյան դասարանում երեխաների մի մասն ավելի լավ է յուրացնում լեզուն, մի մասը՝ ոչ, ինչը հաճախ տայնաճանաչված է դասից դուրս շրջակա միջավայրով: Նմանատիպ ուսումնասիրություններ շատ են արվել: Դրանցից մեկը փաստում է, որ դասարաններում լինում են բացառիկ երեխաներ, որոնք սովորաբար համարվում են դասարանի «դաստիարակ» աշակերտները, որոնք կարողանում են թիրախային լեզվով ավելի լավ խոսել: Պատճառն այն է, որ այդ երեխաները տատանվում են հասարակության այն շերտին, որոնց ծնողները տանը խոսում են տեղի լեզվով եւ նույնիսկ իրենց զավակներին են համոզում կիրառել տեղի լեզուն, ոչ թե անգլայինը: Երկրորդ, այս երեխաները կանոնավոր կերպով անգիր են անում բառերի իմաստները՝ առանց թարգմանելու անգլային լեզվով (Pandey & Jha, 2023): Այդ ամենից երեւում է, որ օտարալեզու միջավայրում հայերենի ուսուցման բարձր որակի համար միայն սովորողի եւ ուսուցչի աշխատանքը բավական չէ, կարեւոր է նաեւ ընտանիքը եւ շրջակա միջավայրը: Այն երեխաները, որոնց ընտանիքներում հաղորդակցման լեզուն հայերենն է, ավելի քիչ խնդիրների են բախվում լեզուն սովորելիս, ինչը չենք կարող ասել մյուսների մասին: Սովորողը միայն դասի ընթացքում է առնչվում լեզվին, իսկ դասից դուրս չկա միջավայր, որտեղ կարող է զարգացնել եւ ամրապնդել իր գիտելիքները:

«Մենակ գրել կարդալ չի էլի, խոսում են արվեստի մասին, դաստիարակման մասին, թանգարաններ են տանում, հետո միասին ինչ-որ միջոցառումներ են կազմակերպում: Այսինքն՝ են միջավայրը, որ իրենք չունեն դրսում, ել սոցիումն է ստեղծվում»⁵:

Աշակերտների կարողությունները զարգացնելու եւ գիտելիքներն արդիականացնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել դասին նրանց արդյունավետորեն ներգրավվելու տայնաճաներ: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը նկատելի ազդեցություն է ունենում մանկավարժների աշխատանքի ինտենսիվության, ինչպէս նաեւ աշակերտների ուսուցման արդյունավետության վրա (Haykakan krtakan mijavayr, 2022): Նախկինում սովորողը ցանկացած թեմայով տեղեկատվությունը կարող էր ստանալ տարբեր ուղիներով՝ դասագիրք, ուսուցչի խոսք, դասի սեղմագիր: Սակայն այժմ, հաշվի առնելով ժամանակակից իրողությունները, ուսուցիչն ուսումնական գործընթացի մեջ ղեկավարում է ներմուծի տեղեկատվության նոր մեթոդներ (Madoyan, 2016):

Հայերեն խոսելու համար, թերեւս, ամենակարեւոր եւ անհրաժեշտ տայնաճանը հայ խոսակից ունենալն է: Այսինքն՝ հայերենը որոշեալ կենդանի եւ մշակութային լեզու տրամադրում համար այն գործածող բնակչություն է ղեկավարում: Երբ դրոշմի բակում երեխան հայերեն չի խոսում, աշակերտները «հայերեն» չեն խաղում, դա նշանակում է, որ այն դադարում է կենդանի լեզու լինելուց: Երբեմն ծնողներն ուրախանում են,

երբ երեխան տեղացիներից լավ է իրենց լեզվով խոսում, սակայն չեն գիտակցում, որ նույնքան լավ, նույն բժախնդրությամբ լիցի է խոսեն նաև հայերեն (Poyatchean, 2022):

Կախված հայալեզու համայնքների աշխարհագրական դիրքից եւ առկայությունից՝ բնիկ լեզվակիրներ գտնելը կամ հայերեն հաղորդակցության մեջ ներգրավվելու փորձերը կարող են դժվար լինել:

Սեփական լեզուն սովորեցնելու շատ տարբերակներ կան, բայց դրանցից առավել ինտենսիվ են հեռահաղորդակցային, տեսալսողական եւ նման այլ մեթոդները: Ուսումնական տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման մեջ աշակերտին տալիս է ոչ միայն սովորելու դրդապատճառ, այլև անկաշկանդ շփման եւ գիտելիքների ամրադնդման հնարավորություն: Մեր օրերում կտրուկ աճել ու ընդլայնվել են տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառության ոլորտները: Ուսուցման էլեկտրոնային միջոցների օգտագործումը նկատելիորեն ազդում է կրթական համակարգերի վրա եւ նոյապատկերի տպավորություն ստեղծում ուսուցման նորարարական մեթոդների զարգացման համար (Ajamoghlyan & Eghiazaryan, 2022): Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման ընթացքում նոյապատկերում է ուսուցման արդյունավետությանը, մեծացնում սովորողների անհատական լեզվական կարողությունները, ճանաչողությունը, հնարավորություն է տալիս, որ սովորողն ինքնակրթվի, կարողանա համացանցում շատ արագ իր լեզվական ծանոթությունները համադրաբար ամրապնդել: Եվ այս իրավիճակում ոչ միայն ուսուցիչն է դառնում գիտելիքների հաղորդման աղբյուրը, այլև համացանցը:

Այսպիսով՝ տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ստեղծել վիրտուալ միջավայր, որտեղ կարելի է իրականացնել տարբեր քննարկումներ՝ առանց լիարժեք դասասանակից դուրս ուսումնառություն եւ շփում՝ առանց տարածության եւ ժամանակի սահմանափակման: Բացի այդ՝ դասավանդողները լիարժեք է տարբեր փոխանակման ծրագրերի, առցանց լեզվական համայնքների կիրառման միջոցով խրախուսեն լեզվի գործնական կիրառումը՝ այդպիսով ստեղծելով տվյալ լեզվով հաղորդակցության մեջ ներգրավվելու փորձնական հնարավորություններ:

Ամփոփելով կարող ենք նշել, որ սփյուռքի առջև ծառացած մարտահրավերները բազմաթիվ են եւ բազմադիմ: Ամենամեծը թերեւս հայկական ինքնության կորստի վտանգն է, իսկ ինքնության պահպանման համար ամենակարեւորը մայրենի լեզվի իմացությունն ու կիրառումն է: Սփյուռքի ուսուցիչը, ի տարբերություն հայաստանի ուսուցչի, բացի լեզվի դասավանդումից, նաև հայկական մշակույթի տարածման խնդիր ունի: Սակայն, ինչպես փաստում են մեր հետազոտությունները, այժմ սփյուռքում աղողող հայերի մեծ մասը չի խոսում կամ վատ է խոսում հայերեն: Նրանց մեծ մասի համար հայերենն օտար կամ, լավագույն դեպքում, երկրորդ լեզու է՝ սփյուռքի լեզու: Ուսումնական ռեսուրսների սակավությունը, հաղորդակցման միջավայրի լակոնիկ, լեզվական իմացության եւ մշակութային տարբերությունները լուրջ մարտահրավերներ են դասավանդողների

համար: Սակայն բաջածանոթ լինելով այդ մարտահրավերներին եւ փորձելով լուծել կամ մեղմել դրանք՝ դասավանդողները կարող են ստեղծել աջակցող եւ ներառական ուսումնական միջավայր, իսկ սովորողները կարող են ավելի արդյունավետ կողմնորոշվել բազմալեզու միջավայրում՝ հաղթահարելով հայերեն սովորելու դժվարությունները:

Նշված մարտահրավերները լուծելու համար անհրաժեշտ է շտաղ իրականացնել որոշակի աշխատանքներ՝ հայ համայնքների հետ հուսալի եւ արդյունավետ կամուրջներ ստեղծելու, հայոց լեզվի իմացությունն ու կիրառումը խթանելու, կրթական, մշակութային եւ հայագիտական օջախների արդյունավետ գործունեությանը, համայնքներում ամկա ներուժի հաշվառմանը, համախմբմանը եւ համահայկական ծրագրերում դրանց ներգրավմանն աջակցելու համար (Hayastani Hanrapetutyun karavarutyun, 2011): Անհրաժեշտ է նաեւ որոշակի աշխատանքներ իրականացնել հայագիտությունը զարգացնելու, հայոց լեզվի իմացությունն ու կիրառումը խթանելու, մշակութային եւ հայագիտական կենտրոնների արդյունավետ գործունեությանը նդաստելու, ուսուցչական կազմի կարողությունների զարգացմանը աջակցելու համար:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆԱՅԵՐԵՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ
ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

Մ փյուռքում հայադաստիարակման գործում որոշակի դերակատարում ունեն մոտ 1000-ի հասնող ամենօրյա եւ մեկօրյա դպրոցներն ու դասընթացները, որոնք շուրջ 400 հազար երեխաների մայրենի լեզուն ուսուցանելու սրբազան գործով են զբաղված: Մեկօրյա եւ երկօրյա դպրոցները գործում են հայկական եկեղեցիներին, համահայկական կառույցներին, համայնքային կազմակերպություններին կից, ինչպէս նաեւ օտար համալսարաններում, հայագիտական ամբիոններում, կենտրոններում գործող դասարաններում, որտեղ կազմակերպվում են հայրենագիտական առարկաների դասընթացներ (Minasyan, 2018):

Ազգային ինքնության բաղադրիչների թվում առանցքայինը, այնուամենայնիվ, լեզուն է: Վերջինիս միջոցով է, որ արտերկրում բնակվող հայությունն ավելի արդյունավետ կարող է հաղորդակից լինել ազգային մշակույթին, լուսավորությանը, հիշողությանը (Sardaryan, 2015): Չնայած այդ ամենին՝ հայերենը սփյուռքի մեր հայրենակիցների գերակշիռ մասի համար վաղուց դադարել է մայրենի լեզու լինելուց:

Երկլեզու համատեքստում մայրենի լեզուն առանցքային դեր է խաղում երեխայի սոցիալական եւ անձնական զարգացման, կրթության եւ երկրորդ լեզվի ուսուցման գործում: Երեխաներն ավելի լավ են սովորում երկրորդ լեզուն, երբ լավ են տիրապետում իրենց մայրենի լեզվին: Երկլեզու ծրագրերով դպրոցներն ու մանկադպրոցներն օգնում են զարգացնել մայրենի լեզուն՝ միաժամանակ զարգացնելով երեխաների կարողությունները դպրոցական լեզվով: Երկլեզու կրթությունն աջակցում է երեխաների անձնական զարգացմանը եւ նույնպես երկու լեզուների եւ մշակույթների միջեւ դրական փոխանակմանը (Yazıcı et al., 2010):

Երկրորդ լեզվի ուսուցման համար գոյություն ունեն մի քանի մոտեցումներ, որոնցից մեկը հայտնի է առավելապես *երկկողմանի* կամ *երկլեզու ծրագիր* (Dual Language Programs / Two-Way Bilingual Education) անունով: Լայնորեն տարածված այս ծրագիրն առաջնային է համարում սովորողի՝ եւ՝ մայրենի, եւ՝ օտար լեզվին հավասարապես լավ տիրապետելը: Ծրագրի նպատակն է ադապտիվ համաժամանակյա եւ զուգահեռ ակադեմիական առաջադիմություն երկու լեզուներից: Բացի այդ՝ երկլեզու ծրագրերը փորձում են նպաստել եւ օգնել, որպեսզի սովորողները զարգացնեն երկլեզվությունը, երկմշակութայնությունը եւ գրագիտությունը (Washington State Office of Superintendent of Public Instruction, 2015):

Մյուս մոտեցումը *զարգացնող երկլեզու կրթությունն* է (DBE or Late-Exit): Այս ծրագիրը նման է նախորդ ծրագրին, քանի որ ուսուցումն իրականացվում է ինչպէս օտար, այնպէս էլ սովորողի մայրենի լեզվով: Սովորաբար նմանատիպ ծրագրերը սկսվում են վաղ շրջանում՝ մանկադպրոցից կամ առաջին դասարանից, երբ ուսուցման 90 %-ն իրականացվում է մայրենի լեզվով, իսկ 10 %-ը՝ օտար լեզվով: Օտար լեզվի ուսուցման ժամաքանակն ու չափաբաժինն աստիճանաբար ավելանում է, մինչդեռ մայրենի լեզվով ուսուցմանը՝ աստիճանաբար նվազում, մինչեւ որ երկու լեզուներով ուսուցման հավասարակշռություն է գոյանում: Ուսումնական ժամանակի 50/50 բաժանումը շարունակվում է մինչեւ ծրագրի ավարտը, որը սովորաբար համընկնում է 6-րդ դասարանի փուլին (Washington State Office of Superintendent of Public Instruction, 2015):

Անկ այլ մոտեցում է **անցումային երկլեզու կրթությունը** (TBE or Early-Exit): Այս մոտեցման մոդատակն է սովորողի մայրենի լեզուն կիրառել որդես հիմք՝ աշակցելու օտար լեզվի զարգացմանը: Նման ծրագրերը հիմնականում սկսվում են վաղ շրջանում՝ ուսուցման 90 %-ը մայրենի լեզվով եւ 10 %-ը՝ օտար լեզվով բաշխումով, համակարգված կերպով ավելացվում են օտար լեզվով դասերի քանակն ու չափաբաժինը, մինչեւ ուսուցումն ամբողջությամբ իրականացվի օտար լեզվով: Սրանք *զարգացնող երկլեզու կրթությունից* տարբերվում են նրանով, որ սովորողներն ավելի արագ են անցնում միայն օտար լեզվով ուսուցմանը, ընդ որում՝ երեք կամ չորս տարվա ընթացքում սովորաբար անցում է կատարվում միայն օտարալեզու ուսուցման (Washington State Office of Superintendent of Public Instruction, 2015)):

Երկլեզու համատեքստում մայրենի լեզուն առանցքային դեր է խաղում երեխայի սոցիալական եւ անձնական զարգացման, կրթության եւ երկրորդ լեզվի ուսուցման գործում: Երկրորդ լեզվով կրթությունն ստացող երեխաներին աշակցությունը հաճախ տրվում է երկրորդ լեզվով ուսուցման լրացուցիչ հնարավորությունների տեսքով: Այնուամենայնիվ, առաջին լեզվի իմացությունն ազդում է երկրորդ լեզվով սովորելու վրա: Հետազոտությունները փաստում են երկլեզվության բազմաթիվ առավելությունների մասին: Երկու լեզուների հասանելիությունը կարող է արագացնել մետալեզվական հմտությունների զարգացումը: Երկլեզվությունը կարող է բարելավել տարածական առաջադրանքների կատարումը, ճանաչողական ճկունությունը, վերլուծական ռազմավարությունները եւ ստեղծագործական մտածողությունը, ինչպես նաեւ խթանել հաղորդակցման եւ մտածողության հմտությունները, որոնք համադաստիսանում են կրթության ավելի լայն մոդատակներին: Սրանք առավելություններ են ոչ միայն փոքրամասնությունների լեզուներով խոսողների համար, այլեւ մեծամասնության լեզվով խոսողների համար, քանի որ նրանք նույնպես կարող են զարգացնել երկլեզվությունը: Երեխաներն ավելի լավ են սովորում երկրորդ լեզուն, երբ լավ են տիրապետում իրենց մայրենի լեզվին: Երկլեզու ծրագրերով դրոշմներն ու մանկադասարաններն օգնում են զարգացնել մայրենի լեզուն՝ միաժամանակ զարգացնելով երեխաների կարողությունները դրոշմական լեզվով: Երկլեզու կրթությունն աշակցում է երեխաների անձնական զարգացմանը եւ մոդաստում երկու լեզուների եւ մշակույթների միջեւ դրական փոխանակմանը (Yazıcı et al., 2010):

Սանկտ Պետերբուրգում հայերենը որդես երկրորդ, օտար եւ մայրենի լեզու ուսուցանելու մեթոդները, եղանակները, առանձնահատկությունները դարձելու համար դաշտային աշխատանքներ ենք իրականացրել Սանկտ Պետերբուրգի ղեկավար համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի ամբիոնում, ինչպես նաեւ Հայ Առաքելական եկեղեցու Լազարյանների անվան հայեցի դաստիարակության կենտրոնում (Լազարյանների անվան կիրակնօրյա դպրոցում) եւ Սանկտ Պետերբուրգի Միքայել Լորիս-Մելիքովի անվան թիվ 259 միջնակարգ դպրոցում: Իրականացրել ենք դասալսումներ թե՛ դպրոցական, թե՛ բուհական համակարգերում, խորքային հարցազրույցներ եւ փորձագիտական հարցումներ ենք իրականացրել դասավանդող մասնագետների, դպրոցի տնօրենների, ծնողների, ուսանողների եւ աշակերտների հետ:

Սանկտ Պետերբուրգում հայերենի ուսուցումը կազմակերպվում է երկու ուղղությամբ՝ դպրոցական եւ բուհական համակարգերում:

3.1. ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Սփյուռքում գործող հայկական դպրոցներն եւադես տարբերվում են հայաստանյան հանրակրթական դպրոցներից: Դրանք հիմնականում մեկօրյա կենտրոններ են, առանձին դեղքերում՝ հայկական բաղադրիչով հանրակրթական հաստատություններ, որտեղ կազմակերպվում են հայերեն դասընթացներ՝ նոյատակ ունենալով այլ միջավայրերում մեծացող հայ երեխաներին հասանելի դարձնել իրենց մայրենի լեզուն ու գրականությունը, մշակույթը, սերմանել ազգային ինքնագիտակցության արժեհամակարգի տարրեր:

Սանկտ Պետերբուրգի հայ համայնքում այս առաքելությունը կատարում են երկու հիմնական կառույցներ՝ *Հայ Առաքելական եկեղեցու Լազարյանների անվան հայեցի դաստիարակության կենտրոնը* եւ *Միքայել Լորիս-Մելիքովի անվան թիվ 259 միջնակարգ դպրոցը*:

Հայ Առաքելական եկեղեցու Լազարյանների անվան հայեցի դաստիարակության կենտրոնը կամ **Լազարյանների անվան կիրակնօրյա դպրոցը** գործում է 1993թ., երբ Սանկտ Պետերբուրգի իշխանությունները հայ համայնքին տարածք հատկացրին Նեայի ողողտայում՝ Սբ.Կատարինե եկեղեցու հարեանությամբ (Aghbalyan, 2011): Դպրոցը գործում է եկեղեցուն կից, բարեգործական հիմունքներով: Հիմնադրման սկզբնական շրջանում այստեղ դասավանդում էին նվիրյալներ, որոնք տարզադես հայերեն գիտեին: Այժմ դասավանդող բոլոր *ուսուցիչները*, ի տարբերություն հայկական սփյուռքի որոշ կրթօջախներում դասավանդող ուսուցիչների, որոնք երբեմն տարզադես լեզվակիրներ են, ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն, անգամ այստեղ համատեղության կարգով դասավանդում են գիտությունների թեկնածուներ⁶: Անկասկած շատ կարելի է այն հանգամանքը, որ դպրոցում դասավանդում են միայն բարձրագույն կրթություն ստացած եւ մանկավարժի որակավորում ունեցող մասնագետներ:

Դպրոցը սկսվում է նախադաստիարակական, ավարտվում՝ վեցերորդ դասարանով (Gabrielyan, 2018): Դպրոցում կրթությունը 6-ամյա է: Ուսուցումը կազմակերպվում է մի քանի փուլով: Առաջին խումբը համարվում է նախակրթարանը կամ նախադաստիարակական դասարանը, որտեղ սովորում են փոքր տարիքի երեխաներ: Այստեղ երեխաները դառնում են տառաճանաչ, եւ հետագայում դպրոցահասակ շրջանում այս հիմքը բավական օգտակար է դառնում: Ինչոյեց եւ տալիս մեր դաշտային հետազոտությունները, նախակրթարանում դասն ամբողջությամբ հայերեն է ընթանում, ուսուցիչը հիմնականում խոսում է միայն հայերեն եւ շատ քիչ դեղքերում է դիմում ռուսերենի օգնությանը: Ըստ ուսուցիչների՝ շատ կարճ ժամանակ անց երեխաները հեշտությամբ սովորում են լեզուն այս ձեւաչափով: Նախակրթարանն ավարտելով՝ սովորողներն ուսումը շարունակում են առաջին դասարանում: Դպրոցում դասավանդում են հայոց լեզու, հայ

գրականություն, հայոց լուսավորություն, հայ եկեղեցու լուսավորություն, հայրենագիտություն, երգեցողություն, գորելեն, ծեփագործություն: Կազմակերպվում են մշակութային եւ եկեղեցական մի շարք միջոցառումներ, որոնց շնորհիվ երեխաները հաղորդակից են դառնում հայ եկեղեցուն եւ հայկական մշակույթին:

Դրոշմը գործում են երկուական առաջին եւ երկրորդ դասարաններ, մյուս դասարանները մեկական են, այսինքն՝ ընդհանուր առմամբ ութ դասարան, որոնցում ընդգրկված է 265 աշակերտ: 6-րդ դասարանով ուսուցումը հայկական մեկօրյա դրոշմը ավարտվում է: Երբեմն տարիներ ամաց սովորողները կարող են արդեն ուսանողական խմբերով վերադառնալ՝ իրենց գիտելիքները համալրելու նպատակով:

Դրոշմը գործում է նաեւ *ուսանողական խումբ*՝ նախատեսված մեծահասակների համար, որտեղ սովորում է հիմնականում ազգությամբ ոչ հայ եւ ոչ լեզվակիր 23 ուսանող: Ուսուցումը տեւում է 1 տարի: Այս դասերի ժամանակ կիրառվում է անցումային երկլեզու կրթության մոդելը (TBE or Early-Exit): Այսինքն՝ սկզբնական շրջանում ուսուցումը տարվում է մայրենի լեզվով (տվյալ դեպքում՝ ռուսերեն), առաջ աստիճանաբար անցում է կատարվում հայերենին: Հայերեն սովորելուց բացի նրանք ուսումնասիրում են նաեւ հայկական արվեստ եւ հայոց լուսավորություն: Կազմակերպվում են այցեր թանգարաններ, իրականացվում են համատեղ միջոցառումներ:

Պետք է նշել, որ Սանկտ Պետերբուրգի հայկական մեկօրյա դրոշմը մեկ դասարանում հաճախ կարող են ընդգրկված լինել *տարբեր տարիքային խմբերի, հայերենի իմացության տարբեր մակարդակ ունեցող սովորողներ*: Ինչդեռ փաստեցին մեր հարցումների մասնակից ուսուցիչներն ու ծնողները, լինում են դեղքեր, երբ միեւնույն դասարանում սովորում են 8-15 տարեկան երեխաներ, ինչը դրանք ավելի բարդացնում է աշակերտների դաստիարակման, դասարանների միավորման: Այս դարազայում, բնականաբար, տարբեր են հայերենի իմացության նրանց մակարդակները, լեզուն սովորելու հնարավորությունը, տեմպերը: Կարելի է նշել, որ համայնքում հայերենը դասավանդվում է որդես երկրորդ լեզու ոչ բոլորի համար: Սովորողներից ոմանք լեզվակիր են եւ անգամ՝ գրաճանաչ: Նրանք հիմնականում այն ընտանիքների երեխաներն են, որոնք Հայաստանից արտագաղթել են վերջին ժամանակաշրջանում: Կան նաեւ ազգությամբ հայ աշակերտներ, որոնք դրոշմ են ցանկանում ընդունվել՝ հայերեն բառ անգամ չիմանալով, քանի որ ընտանիքում բոլորը ռուսախոս են, հայերեն չեն խոսում: Դա լուրջ մարտահրավեր է, քանի որ դրոշմը սկզբունք է խոսել եւ դասն անցկացնել հայերեն, միայն խիստ անհրաժեշտության դեպքում թարգմանել ռուսերեն, սակայն, մյուս կողմից, դեպք է այնպես անել, որ աշակերտները, դժվարությունների հանդիպելով, չհիասթափվեն:

«Մեծամասնությունը հայախոս են, բայց զնալով արդեն քանում է դա: Մեր առջեւ մեծ խնդիր է դրված՝ ինչ ճանադարձով աշխատենք, ունց աշխատենք, որ երեխան չհիասթափվի, որովհետեւ գալիս են, միանգամից ուսուցիչը հայերեն է խոսում: Բայց մեր մոտ անդայման խոսքը դեպք է լինի հայերեն, հետո զուգահեռ ռուսերեն թարգմանությունը»⁷:

Երբեմն լինում են դեղքեր, երբ որոշ աշակերտներ, 30-ը 5-ի հարաբերակցությամբ, չեն ցանկանում շարունակել ուսումնառությունը: Այս իրողությունը բարդացնում է ուսուցիչների աշխատանքը, քանի որ միեւնույն դասարանում սովորում են եւ՝ լեզվակիր, եւ՝ ոչ լեզվակիր երեխաներ: Այսինքն՝ մի մասի համար հայերենը երկրորդ լեզու է, բայց որոշ մասի համար այն առաջին եւ մայրենի լեզու է: Այս հանգամանքը թե՛ ուսուցչի, թե՛ սովորողների համար մի շարք բարդություններ է ներառում: Մասնավորապես, սովորողների մի մասը կարող է դժվարությամբ հաղթահարել ընթերցանության փուլը, կարդալ դանդաղ, հեզելով, իսկ մյուս մասը, ներգրավված չլինելով, ձանձրանալ այդ ընթացքում: Սրանից խուսափելու համար ուսուցիչները ստիպված են դասաժամը վարել տարբեր ուղղություններով, որոնցից բոլոր սովորողները, թեեւ ամանձին խմբերով, ընդգրկված լինեն ուսուցման գործընթացում:

Պրոցը 33 ԿՎՄՍ նախարարությունից ստանում է *դասագրքեր*՝ աշակերտների քանակին համադասարանական, որոնք այնքան էլ չեն գոհացնում դասավանդող մասնագետներին, քանի որ Հայաստանի Հանրապետության դասագրքերը նախատեսված են հայաստանյան ամենօրյա դրոշմների եւ միայն լեզվակիրների համար: Իսկ Սանկտ Պետերբուրգում գործող դրոշմը մեկօրյա է, իսկ մեկ օրում հնարավոր չէ սովորեցնել մեկ շաբաթվա նյութը, այն էլ՝ ոչ լեզվակիրներին:

Պատերի ընթացքում կիրառվում են Դ. Գյուրջինյանի (Gyurjinyan et al., 2015), ինչպես նաեւ Ս. Գալստյանի (Galstyan & Tovmasyan, 2023) համահեղինակությամբ կազմված դասագրքերը՝ նախատեսված հայաստանյան դրոշմների համար: Պատավանդող մասնագետները նշում են, որ միայն այդ դասագրքերով դասընթացը կազմակերպել հնարավոր չէ, եւ ըստ իրենց հայեցողության եւ նախընտրությամբ՝ օգտվում են այլ դասագրքերից եւ նյութերից: Ուսուցիչը, իր ակադեմիական ազատության շրջանակներում եւ սովորողների իմացության մակարդակներին համադասարանական, ընտրողաբար առանձնացնում է նյութեր, իսկ հայերենի բանավոր ուսուցման դարազայում կիրառվում է Ն. Պառնասյանի եւ Ժ. Մանուկյանի «Հայոց լեզվի ինքնուսույց» ձեռնարկը (Parnasyan & Manukyan, 1990): Որոշ առարկաներ, օրինակ՝ երգեցողությունը, դասավանդվում է ուսուցչի նախընտրությամբ, առանց դասագրքերի:

Պատերի ընթացքում ուսուցիչները փորձում են կիրառել զանազան *մեթոդներ*՝ դասն ավելի հետաքրքիր եւ ընկալելի դարձնելու համար: Կարելի է հանգամանք է այն, որ դասին մասնակցում են հնարավորինս շատ աշակերտներ: Կարող են նաեւ դասը, ասում անգիրներ, կատարում գրական նյութի վերլուծություն, համեմատում նախկինում անցած այլ ստեղծագործությունների հետ, փորձում գտնել ընդհանուր եզրեր:

Պատն անցկացվում է հայերեն, եւ անգամ այն բառերը, որոնք հասկանալի չեն լսարանին, ուսուցչի կողմից բացատրվում են կրկին հայերեն՝ երբեմն կիրառելով ռուսերեն համաժամանակյա թարգմանություն: Այսինքն՝ ուսուցիչներն առավելապես ջանում են կիրառել միալեզու ուսուցանման մեթոդը, մոր, ամծանոթ հայերեն բառերն ու հասկացությունները բացատրվում են ավելի դժվար եղանակով, արդեն իմացած գիտելիքների միջոցով: Պրոցի ուսուցիչներից մեկն ան-

գամ նախադատության տակ կամ ցածր դասարանի աշակերտների շրջանում կիրառում է հետաքրքիր հմար. նշում է, որ միայն հայերեն է խոսում եւ հաղորդակցվում, որոշեց՝ աշակերտների մոտիվացիան առավել բարձր լինի եւ նրանք էլ անընդհատ աշխատեն իրենց բանավոր խոսքը, ասելիքը ներկայացնել հայերեն՝ առանց ռուսերեն բառերի եւ արտահայտությունների:

Ըստ 5-րդ դասարանի ուսումնական ծրագրի՝ աշակերտները ղետք է ընդլայնեն հայերենի հնչյունների վերաբերյալ իրենց գիտելիքները, մասնավորապես տարկերացում կազմեն ձայնավոր եւ բաղաձայն հնչյունների արտասանական տարբերությունների, բաղաձայնների՝ ըստ արտաբերման տեղի, եղանակի, ձայնի եւ աղմուկի, ինչդեռ նաեւ կազմության տարբերությունների մասին: Պետք է ծանոթանան նաեւ հայերենի միաշարք, երկշարք եւ եռաշարք բաղաձայններին, ինչդեռ նաեւ ձայնավորների, երկհնչյունների հնչյունափոխական մի շարք օրինաչափությունների:

Բառագիտության բաժնում աշակերտները ղետք է համալրեն իրենց նախնական գիտելիքները բառերի կազմության վերաբերյալ, գաղափար կազմեն դարգ, բարդ, ածանցավոր բառերի մասին: Բառերի ձեւափոխության խմբերի մեջ սովորեն տարբերակել հոձանիշ, հականիշ, համանուն բառերը, գաղափար կազմեն նաեւ բառերի մեկնաստության եւ բազմիմաստության, ուղիղ եւ փոխաբերական իմաստների վերաբերյալ:

Աշակերտները ստեղծագործության ժանրերից ղետք է ծանոթանան հեքիաթին, առակին, դատնվածքին, բանաստեղծությանը, անցնեն այդ ժանրերով գրված ստեղծագործություններ:

Մասնագետները ձգտում են սովորեցնել հայերենի բառակազմական, ձեւաբանական եւ շարահյուսական կառուցվածքը: Այսինքն՝ առաջնայինը լեզվի առանձնահատկություններին տիրադետելն է, ոչ թե բառադաշարը: Բառադաշարը ժամանակի ընթացքում կարող է հարստանալ եւ հակառակը՝ ճոռացվել, իսկ եթե սովորողը տիրադետում է ճիշտ նախադասություն կազմելու տեխնիկային, հոլովական եւ խոնարհման համակարգերին, ադա բառադաշարը կարող է ինքնուրույն հարստացնել եւ հասնել լեզվի լիարժեք իմացության:

Դորոցն ավարտելիս տրվում է վկայական: Անցկացվում են տարեվերջյան համադորոցական քննություններ, հայերենի դեդքում այն ստուգողական թելադրություն է: Արդյունքների հիման վրա սովորողները փոխադրվում են հաջորդ դասարան, իսկ ավարտական՝ 6-րդ դասարանի աշակերտները ստանում են գերազանցության, հարվածայնության վկայականներ: Այն աշակերտները, որոնք չեն հաղթահարում անցողիկության չեձը, ամռանը ուսուցչի հետ լրացուցիչ աշխատում են, որոշեց՝ սեղտեձերից կարողանան ուսումը շարունակել առանց բարդությունների: Սակայն դորոցում առկա հիմնախնդիրներց մեկն այն է, որ հաձախ տարրական դասարաններն ավարտելուց հետո աշակերտներն ուսումը չեն շարունակում բարձր դասարաններում: Պատճառներից մեկն այն է, ինչդեռ նշում է դորոցի տնօրենը, որ աշակերտները հայկական մեկօրյա դորոց հաձախ կարող են սկսել հաձախել 9-11 տարեկանում: Երեք տարի անց նրանց հիմնա-

կան հանրակրթական դպրոցում առարկայական ծանրաբեռնվածությունը մեծանում է, ինչի հետևանքով, դժբախտաբար, հայկական կրթությունը մղվում է երկրորդ լավան: Այդ դատմամով դպրոցը կարող է ունենալ երեք տարրական դասարան, որից երկուսը մնան ուսումնառության շորրորդ տարում, իսկ հինգերորդ եւ վեցերորդ տարիներում լինեն մեկական դասարաններ⁸:

Խառնամուսնական, երկլեզու ընտանիքներում երբեմն կարող է հայերեն սովորելու դահանջմումը մեծ լինել: Դպրոցականների մեջ կան մաեւ այնդիսիք, որոնց մայրը, օրինակ, ազգությամբ ռուս է, սակայն մա հետամուտ է լինում, որ իր երեխան հայերեն սովորի, գրանանաչ լինի: Այսինքն՝ ռուս կանայք անձնական մախանձեռությամբ ձգտում են իրենց երեխաներին մոտեցնել հայ մշակույթի տարրերին (Gabrielyan, 2018): Կամ, ինչդեւ դատմում է մեր հարցվողներից մեկը, իրավիճակ կա, երբ մայրը հայ է, հայրը՝ լեհ, ադորում են ռուսական միջավայրում, բայց մայրը հետամուտ է եղել, որ երեխան հանախի հայկական դպրոց, այնդիսի ոգով է դաստիարակել, որ մա հետագայում դարձել է հոգեւորական: Դժբախտաբար, կան մաեւ հայ մայրեր, որոնք ռուսախոս են եւ այդդեւ էլ դաստիարակում են իրենց երեխաներին: Երբեմն էլ դպրոցի մախկին սաներն են բերում իրենց երեխաներին հայկական կրթություն ստանալու:

«Էն երեխերը, որ արդեն հիմա ավարտել են, արդեն իրենց երեխերին են բերում, այսինքն՝ կաղը կա»⁹:

Ստորեւ ներկայացնենք, թե ինչդեւ է 3այ Առաքելական եկեղեցու Լազարյանների անվան կիրակնօրյա դպրոցի 5-րդ դասարանում կազմակերպվում հայոց լեզվի եւ գրականության դասաճաներից մեկը¹⁰:

Դասաճանի սկզբում կատարվում է մախադեւ հանձնարարվաճ նյութի, տվյալ դեղդում՝ Վ. Տերյանի «Գետակի վրա» բանաստեղծության ընթերցում: Ընթերցելիս ուշադրություն է դարձվում հայերենի ուղղախոսության օրինաչափություններին, շտկվում են հիմնական ուղղախոսական շեղումները, բարդ բառերի արտասանական դժվարությունները:

Այնուհետեւ կատարվում է բանաստեղծության վերլուծություն՝ կերդարների համադրության եւ մրանց հակադրությունների վերհանման միջոցով: Մասնավորադեւ, «Գետակի վրա» բանաստեղծության մեջ դիտարկվում են ուռենին, որը լալկան է, եւ գետակը, որը խոխոջալով հոսում է: Ուսուցիչը, կերդարների բնորոշումների հիման վրա, աշակերտներին մղում է հարցուդատասախանի: Օգտագործվում է ինտերակտիվ մեթոդ, խմբային քննարկումների օգնությամբ աշակերտները դուրս են բերում կերդարների խորհրդանիշները. ընդհանրացվում են մնայունի, հավերժի եւ անցողիկության գաղափարները:

Այնուհետեւ գուգահեռ քննարկում-վերլուծություն է կատարվում մեկ այլ՝ 3. Թումանյանի «Թմկաբերդի առումը» ստեղճագործության միջոցով: Ուսուցիչն օգնում է աշակերտներին մտաբերել այն հատվաճը, որում կրկին ներկայացվում են մնայուն եւ անցողիկ արժեքները, մասնավորադեւ՝ մարդու կատարաճ գործերը՝ որդեւ հիմնական, մնայուն, իսկ այլ բաներ՝ գանձն ու գահը, անգամ սերն ու ուրախությունը, անցողիկ են ճանանակի ընթացքում:

Հաջորդ գուգահեռն անց է կացվում մեկ այլ՝ 3. Շիրազի «Արագարիտն ու փրփուրը» բանաստեղծության միջոցով: Ուսուցիչը մղում է աշակերտներին կրկին վերհիշելու անցած նյութը, ըստ անհրաժեշտության՝ նաեւ գիրքը թերթելու միջոցով: Ինտերակտիվ կերպով աշակերտները նշում են երկու կերպարների՝ փրփուրի եւ մարգարտի՝ բանաստեղծության մեջ տրված, նաեւ իրենց կողմից առաջարկվող հատկանիշները: Կրկին մատնանշվում է անցողիկության, ժամանակավոր փայլի, որն այս դեպքում կերպավորում է փրփուրը, եւ մնայուն արժեքների՝ մարգարտի հակադրությունը:

Ինչդեռ նկատելի է, դասի ընթացքում ուսուցչի կիրառած մոտեցումներից է *մտաբերումը*: Վերջին ժամանակներում կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ մտաբերումը՝ մտադասիված գիտելիքի ակտիվացումը, դուրսբերումը, ուսուցման առավել արդյունավետ մոտեցումներից է (Khachatryan, 2020): Հատկանշական է, որ այն կիրառվում է նաեւ Սանկտ Պետերբուրգի հայկական դրոշում՝ հայերենի ուսուցման շրջանակներում:

Ստեղծագործությունում ներկայացվող կերպարների վերլուծությունից, առկա հակադրությունների վերհանումից բացի, ուսուցչի հարցմամբ աշակերտները ներկայացնում են նաեւ ստեղծագործությունների ժանրային տարբերությունները, երբ կարող է հիմնական միտքը ներկայացվել մի դեպքում գլխավոր հերոսների, մյուս դեպքում՝ անմիջապես հեղինակի կողմից:

Ուսուցանվող նյութն ավելի հետաքրքիր եւ հիշարժան դարձնելու նպատակով ուսուցիչը ներկայացնում է նաեւ լրացուցիչ տեղեկություններ, փաստեր հայ հեղինակների կենսագրությունից, որոնք կարող են աշակերտներին մասամբ հայտնի լինել: Օրինակ՝ Վ. Տերյանի կամ 3. Թումանյանի ստեղծագործություններին ծանոթանալիս ուսուցիչը դատմում է նաեւ գրողների կյանքի այն դրվագները, հանգամանքները, երբ նրանք եղել են Սանկտ Պետերբուրգում:

Դասաժամին, հայերեն բավականաչափ լավ խոսելով հանդերձ, աշակերտները թույլ էին տալիս լեզվական որոշ շեղումներ, նշենք դրանիցից մի քանիսը.

